

Խ. ՍԱՐԳՍՅԱՆ



ԱՅՎԱՅՐԱԿԱ

4 b b 6 20 u.



b p b d. u. u. 1963



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

Х. С. САРКИСЯН

САЯТ-НОВА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН - 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Ա.ԲԵՂՅԱՆԻ ԱՆՁԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱՏԻՏՈՒՏ

891.99.092 [Անդր. Զովս]

21.

Խ. Ա. Ա Ա Բ Գ Ա Յ Ա Ն

ԱԱՅԱԹ-ՆՈՎԱ

A Հ
Հ Հ Հ Հ Հ Հ Հ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ

1963.

Այս աշխատության մեջ հեղինակը, վերլուծելով
Եայաթ-Նովայի լավագույն՝ հայերեն, վրացերեն և
աղբբեջաներեն բանաստեղծությունները, գնահատում է
նրա մեծ ժառանգությունը դերազանցորեն հասարա-
կական-Փիլիսոփայական և Էսթետիկական առումով:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Սայաթ-Նովան օրինաշափ արդյունքն է մեր կյանքի և գրականության աշխարհականացման այն հարատե պրոցեսի, որն սկսվեց Հայաստանում X—XI դարերում: Նրա ստեղծագործության մեջ լսելի են միջնադարյան մեր պայծառ պոեզիայի մոտիվները: Նարեկացու տաղերի վառ դույները, Ֆրիկի բմբոստ ոգին, Կոստանդին Երզնկացու շեշտված աշխարհասիրությունը, Աղթամարցու հոգեկան տագնապը, Հայրենների ավարտուն գեղեցկությունը, Հովնաթանի և XVII—XVIII դարերի բազմաթիվ աշուղների սիրու և կյանքի հրավերը—այս ամենն տուկա են Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ, անկախ այն բանից՝ ծանոթ էր նա իրեն նախորդող այդ երգիշներին, թե ոչ, բացառությամբ Հովնաթանի, որին նա, իհարկե, գիտեր:

Սայաթ-Նովան վերջավորում է միջնադարյան հայ պոետացի դարավոր զարգացումը և նշանավորում նոր պոետիայի, նոր մարդու գալուստը:

Սայաթ-Նովան ծնվել, ապրել է Թիֆլիսում, որն Արևելքում մեծ հոգակ էր վայելում թե՛ իր հարստությամբ ու գեղեցկությամբ և թե՛ իր յուրատեսակ կենցաղով: Նրանով «Հիանում էր ամբողջ Փոքր Ասիան և Մերձավոր Արևելքը»,—ասում է Հ. Թումանյանը¹: Թիֆլիսի բնակիչները, նրա հասարակ ժողովուրդը աշքի էին

քնկնում իրենց կենսասիրությամբ, սրամտությամբ ու լայնախռոչությամբ: Լայնախռոհ էր նաև Սայաթ-Նովան: նրա հայացքը թափանցում էր հեռուները, իսկ նրա կարողությունը մարդու հոգեկան աշխարհը խորանալու մեջ, կարելի է ասել, անսահման էր:

Թիֆլիսը բաղմազդ էր: «Նրա մեջ՝ եկել խառնվել, միացել էին Արևելքի զանազան ժողովուրդները իրենց բարբառներով, կրոններով, փիլիսոփայություններով՝ ու ազգային ստեղծագործություններով», և որովհետեւ այդ զարմանալի քաղաքի կյանքին «տոն տվորը վրացական անհոգ ու զվարի ողին էր, էդ պատճառով էլ հին Թիֆլիսը իրար խորթ տարրերի էթնոգրաֆիական մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ հարսանքատուն, որ հրավիրված էին Կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը՝ քեզ քաշելու»²:

Այս ամենը զրոշմվել է մեջլիսների սիրելի աշուղ Սայաթ-Նովայի ստեղծագործության վրա: Սայաթ-Նովան, որպես բացառիկ երեսյթ, Թիֆլիսի երեք ժողովուրդների՝ վրացիների, հայերի ու ադրբեջանցիների վեզուներով երգում էր հավասար ուժով և ոգով: Սա հետեանք է այն բանի, որ հարեան այդ ժողովուրդները, պահպանելով իրենց ուրուցն լեզուն և ոսկորությունները, բայց տոգորված միենույն աշխարհազգացումով, հոգեկան կյանքի խնչ-ինչ բարձր ուսուրաներում միասնացել էին և հզբայրության լոելլայն ուխտ կազել միմյանց հետ: Սայաթ-Նովան հենց այդ միասնության մունիսիկըն չէր, զիտակցելով մարդկանց ցեղային-կրոնական տարբերությունները, պարծաճքով ասելով, որ ինքը հայ է, նա աարբերություն շէր զնում մարդկանց միջի, բարոցապես հավասար էր հանալում նրանց:

Յեսուսական կարդիբի տիրապետության ժամանակ հասարակական կյանքը Անդրկովկասում ուրուն ձևեր ուներ: Չկար ո՛չ թատրոն, ո՛չ ակումբ, ո՛չ լրագիր Դրանց փոխարինում էին մեյզանն ու մեջլիսը, փողոցն ու սրճարանը: Այս վայրերի պիսավոր հերոսը աշուղն էր: «Սավն ու խաղն՝ իր հոգին ու մարմինն» էր, — ասում է Գ. Ախվերդյանը³: Աշուղը պիտի լիներ սրամտությամբ ու շնորհքով օժտված մարդ: Նա որոշ վիտելիքներ պիտի ունենար, իմանար լիզուներ, տեղյակ լիներ արեելյան տաղաշափության նրբություններին: Իր երգածը նա հաճախ գրի էր առնում: Իր լսողներին աշուղը դվարձացնում էր ու միաժամանակ ուսուցանում: Նա և՛ բարոյախոս էր, և՛ զերասան: Մի քաղաքից նա հաճախ գնում էր մի ուրիշ քաղաք, և ամեն տեղ անձկորեն սպասում էին նրան, ընդունում գրկարաց: Բոլոր տների դռները բաց էին նրա առաջ, իր արվեստով նա զարմացնում էր լսողներին, հմայում, գերում: Նա նրանց հույզերի տրտահայտիչն էր, խոհերի թարդմանը: «Նա միշտ աղջի մեջ ու աղջի հետ էր»⁴:

Աշուղը ուրախ և անհոգ մարդ էր, սիրում էր ազատ կյանք ու տարված հասարակության, խալխին ծառայելու մաթքով, քիչ էր մտածում տան մասին: Այդ խոկ պատճառով ընտանիքում նրա դավթարները «զիվական» էին համարվում և հարմար գելքում փորձում էին աղատվել նրանցից: Փասն տարի առաջ վախճանած Քիշիկ-Նովի կինը, — պատճում է Գ. Ախվերդյանը, — Հենց սուգ անելու օրերին, զցում է իր մարդու թղթերն ու դավթարը վառած թոնիքն, ահու վայ թե որդին էլ դնա հոր հանապարհով, որն որ զիփ զուսն էր ման ածում մարդուն ու զցել էր ատլի մոքեմեն տունն ու ընտանիքը»⁵: Աշուղը անդործնական էր առօրյա կյանքում, երազանքներով

տարիված մարդ, խրախնձուում նա ուրախացրել է ժողովրդին, տրտմության օրին նրա հետ սուգ արել: Նա կրթել է հասարակությունը՝ իմանալով նրա պակասությունները: Սրառում կրելով ժողովրդի զգացմունքը, աշուղները «զվարթ ու կոկած խոսքով նկարագրել են սիրու կաթոգին գրգանքն, հետա չէ դեմուգեմ խոսելիս չեն քաշվել՝ անպարկեցա ու անգութ մարդուն հրապարակում հալածելուցն. ու իրանց գլխին խալխի նոքար ասելով՝ անց են կացրել բոլոր կյանքն խաղ ասելում...»⁶:

Հենց այդպիսի մի մարդ էր Սայաթ-Նովան, որի պոեզիան, ինչպես ասել է Վ. Բրյուսովը, լցորել է իրենով ամբողջ XVIII դարը⁷:

XVIII դարը Վրաստանի անկախության վերջին դարն էր ու լի էր ներքին պառակտիշ պատերազմներով, Պարսկաստանի և Տաճկաստանի ավերիշ ներխուժումներով երկրի ներսը: Հենց նման ներխուժման գոհ դարձավ ինքը՝ Սայաթ-Նովան: Վրաստանը ավերվում էր նաև չեղփների արշավանքների հետևանքով՝ հյուսիսից: Ֆեոդալական ձնշման ուժեղացումը խորացնում էր երկրի քայքայումը, որը առավելապես զգալի էր զյուղացիական դանդվածների և արհեստավորության համար: Սայաթ-Նովայի ստեղծագործության մեջ երեսում է բանաստեղծի վերաբերմունքը երկրի ու ժողովրդի առ այս դժվարին կացությունը:

I

ԽՈՍՔԻ ՌԻԺԲ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ԿՈՉՈՒՄԸ

1

«Մահըս իրա վուտով գու քա...» խաղում (47 ա)⁵ Սայաթ-Նովան ասում է, որ աշուղությունը կրակ է, խենթացրեց, դիվանա Մեջլում դարձրեց նրան, զանը վառեց, հոգին հանեց: Բանաստեղծը աշուղությունը համեմատում է զաղացի հետ, որն անջուր չի կարող աշխատել: Ուրեմն, ինչպես զաղացն անընդհատ ջուր է պահանջում, այնպես էլ աշուղությունը անընդհատ էլլիս է պահանջում, հույզ, որը ջրի պես անսպառ պիտի լինի, միշտ ալեկոծի հոգին, նրա մի կոհակին պիտի հաջորդի մի նոր կոհակ: «Յիս շիմացա, վունց փաթաթվից աշըղութինն իմ գլխին», — ասում է Սայաթ-Նովան: Աշըղությունը Սայաթ-Նովայի համար տարերք է, հատուկ նրան ի սկզբանե անտի, նրա էությունն է, շունչը, ավյունը:

Աշըղի և նրա արվեստի մասին առավել ընդարձակ խոսք ունի Սայաթ-Նովան «Ամեն սաղի մեջըն գովլած...» հայտնի խաղի մեջ (1 հ), որը երգչի ամենասիրած երաժշտական գործիքի, քյամանչի, գովքն է: Այս խաղը գրված է 1759 թվականին, նախորդը՝ մի տարի առաջ, 1758 թվականին: Երկուսն իւ, այսպիսով, հորին-

ված են Սայաթ-Նովայի ստեղծագործական կարողությունների փթթման շրջանում, որը, դատելով թվագրած խաղերից, կարելի է համարել 1753—1759 թվականները, առանձնապես՝ 1758—1759 թվականները:

Անսահման է աշուպի երգի, նվագի ներգործության ուժը մարդկանց վրա,— ասում է Սայաթ-Նովան այս խաղում: Նվագի աղղեցությունն այնքան մեծ է, որ մարդիկ, ընդարձացած, կարող են նրա հմայքից գիշերներ լուսացնել: Միաժամանակ, նա կարող է այնքան ներդաշնակ լինել, այնքան մեղմ, որ քաղցր քուն բերի լսողին: Քյամանշան մոգական ուժ ունի հիմնդի վրա. նրան զողը կտրում է: Տխոր է հոգի՝ կիմնդացնի նա քեզ, բայսական է, որ լսվի նրա ձայնը՝ բոլորի սիրտն էլ բացվում է, որախանում: Գողակներին նա իր շուրջն է հավաքում, մեջլիսների կենտրոնն է նա: Արվեստը կերպարանափոխում է մարդուն, աղնվացնում նրան, բարձրացնում: Դիմելով քյամանշին, Սայաթ-Նովան ասում է,

Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուղի քա՛սն իս,
համանչա՛...

Սայաթ-Նովային, խևապես, չի կարելի զրկել քյամանշից, խաղից, որովհետեւ դրանք են կազմում նրան էությունը: Առնել նրանից արվեստը՝ նշանակում չ խաթարել նրա հոգին, ոչնչացնել նրա անհատականությունը: Բայց Սայաթ-Նովան շատ լավ դիտեր, որ բոլոր մարդկանց վրա չէ, որ տարածվում է արվեստի կախարդական ուժը: Կան մարդիկ, որ աշքեր էլ ունենալով, կույր են այնուամենայնիվ: Նրանք օկտակ աշկիրով բեյթիրը շին հասկանա»,— ասում է նա (18 ա): Կան էլ մարդիկ, որ տկանց ունենալով, ի վհճակի շեն լսելու բյամանշի քաղցր ձայնը, հանգը.

Նախագ մարքն ժիզ չի տեսնի, դուն նըրա պա՛սն իս,
Քամանչա՛,

— ասում է բանաստեղծը:

Սերը, զոզալը, սիրած կինը աշխարհի տմենամեծ
արժեքներիցն են Սայաթ-Նովայի համար: Եվ հետաքրքրիր է, որ այն բառերը, որոնցով նա նկարագրում է իր սիրածի հաղուստը կամ դիմագերը, նույն բառերով էլ նա գովերգում է իր քյամանշան: Արծաթ ու ոսկի, շավա-
հիր ու սաղափ, շիրմա ու վարադ — սրանցով են զար-
դարված Սայաթ-Նովայի քյամանշան, բայց և սրանք են
փայլ տալիս զոզալի հագուստին: «Լալ ու ալման իս,
քյամանշա», — ասում է Սայաթ-Նովան և միհնույն բա-
ռերով բնութագրում իր սիրածի ատամների գեղեցկու-
թյունը:

«Անուշանամ զինով լիքըն դուն օսկե բասն իս,
Քամանչա՛,
— կարգում ենք Սայաթ-Նովայի մոտ: Նույն պատկերով
էլ նա հայտնում է իր սերը զոզալին.

Անմահական ջրով լիքըն օսկե փրեշան իս ինձ ամա
(24 Բ)...

Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, որ
քյամանշան հաճախ նույն բառերով է երգվում, ինչ և
զոզալը: Բայց միայն առաջին հայացքից: Այս մերձե-
ցումներով Սայաթ-Նովան նորից ասում է, որ արվեստը
կազմում է մարդու էության օրգանական, նվիրական
մասը, նրա հոգեկան աշխարհը կազմավորող, նրան զե-
ղոցկացնող անհրաժեշտ բազազրիչներից մեկը:

Գիտակցելով արվեստի ուժը, Սայաթ-Նովան դի-
տակցում է նաև իր, արվեստագետի ուժը: Նա գիտե իր
երգի ու նվազի վարակիչ դորությունը, գիտե, որ իր

խաղով նա իշխում է մարդկանց վրա, գերում նրանց, բարոյապես հպատակեցնում իրեն։ Դրա համար ի հենց, որ իր գովքը քյամանշին նա ավարտում է հետևյալ տողով։

Քանի սաղ է Սայաթ-Նովեն, շա'տ բան կու տեսնիս, բամանչա...

Սեփական արժանապատվության, որպես արվեստագետի, գիտակցումը արտահայտվում է ոչ միայն քյամանշին նվիրված խաղի մեջ, այլև ուրիշ խաղերում։ Մի տեղ, օրինակ, բանաստեղծն ասում է. «Սայաթ-Նովեն իմ, ուժը ձայնիս մեջն է» (26 վ)...

Սեփական արժանապատվության բացահայտումը առավել համարձակ ի հնչում «Դուն էն գլխին խմաստուն իս...» (10 հ) հմացիչ խաղում։ Սայաթ-Նովան խորապես վրգովմած է; Նա իր հավատարմությունն է հայտնում թագավորին, բայց և միաժամանակ կշտամբում նրան։ Մի՞թե կարելի է, խմաստուն լինելով, հավասարվել հիմարին։ Կամ հոգնելով, այդ հոգնածության պատճառը ուրիշի մեջ որոնել։ Անպիտան մարդիկ շատ կան։ Նրանք ոչ միայն արվեստի, այլև առհասարակ մարդու ուրախության, մարդու երջանկության թշնամի են ու հենց դրա համար իլ թշնամի նաև Սայաթ-Նովային։ Բայց մի՞թե կարելի է նրանց լսել. կամ իմաստ ունի՞ քրքրել ցաված սրտի վերքերը...

Սայաթ-Նովայի խոսքը վճռական է, անվախ։ Նրա հիշեցումը թագավորին, թե վերջինս ո՞ւմ հետ գործ ունի, նախազգուշացում է կարծես, անգամ սպառնալիք.

Էրազումըն տեսածի նիդ միզի մե հեսաբ մի՛ անի...

Սայաթ-Նովայի յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր տողը լի է սեփական արժանապատվության զգացումով։ Նա համեստ է և անպահանջ մարդկանց նկատմամբ։ Բայց որքա՞ն նա բարձր է դասում արվեստը, գիտակցում կյանքում ունեցած նրա բացառիկ նշանակությունը, որպիսի՝ արժանիքներ է նա տեսնում արվեստագետի, ստեղծագործողի, իր մեջ։

Ամեն մարք չի' կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է,

Ամեն մարք չի' կանա կարքա՛ իմ գիրըն ուրիշ ջըրեն է...

Այս հոչակալոր երկտողով Սայաթ-Նովան նորից դիմագրավում է բութ, կյանքի, արվեստի վեհությունը շրմբոնող մարդկանց։ Սա քյամանշին ուղղած խոսքի՝ «նաքաղ մարթն քիզ չի տեսնի»՝ շարունակությունն է, նրա խորացումը և ընդլայնումը։ Այո՛, կույր, գեղեցկություն շտեսնող մարդիկ չեն կարող կարդալ Սայաթ-Նովայի իմաստուն գիրը, խուլ մարդիկ, նրանք, ովքեր ի վիճակի շեն լսելու քյամանշի քաղցր ձայնը, ի վիճակի շեն նաև ընկալելու բանաստեղծի ոգեշունչ երգը։ Այդ երգը կարող են ըմբռնել, այդ գիրը կարող են ընթերցել նրանք, ովքեր հոգեկից են բանաստեղծին, ովքեր նմանվում են նրան իրենց կյանքով, վերաբերմունքով դեպի աշխարհը, ովքեր իրենց կացությամբ հարազատ են նրան։

Սայաթ-Նովայի՝ իր մեծության, իր ուժի գիտակցումը մարդկանց ամենանվիրական պահանջները բավարարելու ասպարեզում սրանով չի սպառվում։ Նա տառմ է.

Յունիարբս ավագ չիմանաս՝ բարափ է,

բարուկը բեն է...

Իսկ մի ուրիշ, ոչ պակաս հմայիչ «Յամամ աշխարք պըտուտ էկա...» (35 հ) խաղում, որ գրված է առաջինից ուղիղ Հինգ տարի հետո (1758 թվականին), նաև ասում է. «Յիս է՞ն Սայաթ-Նովասին չիմ, վուր ավզի վըրս Հիմնանամ...»:

Յարմանալի է, թէ ինչպիս Սայաթ-Նովոն մարդարեայցել է. ու կարողացել ոչ միայն իր տեղը որոշել ժամանակակից հասարակության մեջ, այլև դիտակցել իր ստեղծագործության մեծ բովանդակության նշանակությունը սերտնդների համար: Եվ դա իր ստեղծագործական վերելքի սկզբնական շրջանում:

Սակայն զիտակցելով իր դերն ու նշանակությունը ներկայի ու ապագայի համար, Սայաթ-Նովան շարունակում է միանդամայն զգոն և օրինեկտիվորեն նայել աշխարհին: Նա գիտե, որ որքան էլ ինքը մեծ լինի, կյանքը, այնուամենայնիվ, շատ ավելի մեծ է և հզոր, գիտե, որ աշխարհի գործերը ընթանում են իրենց սեփական հունով, անկախ նրանից: Աշխարհի անձայրածիրության մեջ նա սոսկ մի փոքրիկ հատիկ է համարում իրեն.

Քանի գուգե բամին տանե՝ ծովեմեն ավագ չի

պակսի;

Թեզուզ ըլիմ, թեզուզ շըլիմ՝ մեջիսներուն սազ

չի պակսի...

Սայաթ-Նովան շնվագի, մեկ ուրիշը կնվագի, նա չերդե, մեկ ուրիշը կերպե: Սազն է անմահ, այսինքն՝ երգը, սերը, գեղեցկությունը, ինքը մարդը, կյանքն իմաստավորելու նրա անընկճելի հավատը: Բայց մեծարելով աշխարհը, Սայաթ-Նովան նորից չի կորցնում

իրեն ու չի ճղմվում աշխարհի ծանրության տակ: Անհատը շարունակում է մնալ անհատ ու նրա կարևորությունը՝ մարդկանց համար հրամայական:

Թե կու պակսիմ, ֆիզ կու պակսիմ՝ աշխարիս
մե մազ չի պակսի...

2

Սայաթ-Նովան հորինող էր, նվագող և երգիչ: Ինքն այդ ամենի մասին խոսում է իր խաղերում: Մի տեղ նա դուլում է իր երաժշտական գործիքը՝ քյամանչան, մի ուրիշ տեղ ասում, որ իր ուժը ձայնի մեջ է: Բայց հայտնի է, որ իր անմահության հիմքը նա համարում է զիրը, այսինքն՝ խոսքը:

«Զենքու քաղցրը ունիս...» (19 հ) խաղի մեջ բանաստեղծը տարակուսանքի մեջ է՝ ամեն ինչ ասված է՝ յարի մասին, ել ի'նչ խոսքերով գովերդի նրան: Եթե դումաշ անվանի, — դա շորեղեն է, հետեւապես կմաշվի: Եթե սալքի անվանի — դա էլ փայտ է, մի օր կտաշվի.

Ֆիզի վունց նմանցընիմ չինարի,

Չուն չինարըն կրակումըն կու վառի (14 ա)...

Այս ամենի մեջ մնայուն ոշինչ չկա, բոլորն էլ հատնող են, մինչդեռ անհատնում է Սայաթ-Նովայի յարի հմաշքը: Գուցե մանուշակ անվանի, — շարունակում է տարակուսել բանաստեղծը, — այդ էլ կասեն՝ սարեմեն է: Թերեւ չավայիր՝ կասեն բարեմեն է: «Բաս վո՞ւնց թարիփ անի» իր սիրածին Սայաթ-Նովան:

Տարակուսանքը ալիք առ ալիք անցնում է Սայաթ-Նովայի տողերով, բայց յուրաքանչյուր անգամ զդացմունքների հորդումից նորանոր պատկերներ են առաջանում, նորանոր արտահայտություններ ձեւավորվում, առավել փառահեղ, քան նախորդները:

Բանաստեղծն ասում է.

Մարա իս, զո՞գալ...
ապա շարունակում՝

Արեգագի նըման փարա իս, զո՞գալ...
ու վերջացնում.

Սովեմեն դուս Էկած զարա իս, զո՞գալ...

«Մարա իս», «Փարա իս», «Պարա իս», այսինքն՝
անդին քար ես, բայց ոչ սովորական, այլ վիշտապ օձի
զլիսի հեքիաթային քար ես, հոյակապ ես, բայց արեգա-
կի նման հոյակապ, ակն ես, բայց ծովի խորքից հա-
նած ակ: Յուրաքանչյուր անդամ բանաստեղծը մի քայլ
առաջ է գնում, ուժեղացնում իր պատկերը:

Սյոսփիսով, խոսքի «պակասության» առջև կանգ
առավ Սայաթ-Նովան, բայց և խոսքով լրացրեց այդ
բացը: Խոսքի մեծ վարպետը դրանով կարծես ասում է,
որ, վերջիվերջո, որքան էլ քեզ շրավականացնի խոսքը,
որքան էլ մեծ դժվարությունների հանդիպես այդ կա-
պակցությամբ, բոլոր դեպքերում էլ նորից միայն խոս-
քով, խոսքի նորանոր գյուտերով կարելի է արտահայտել
զգացմունքները և միտքը:

Սայաթ-Նովայի «խոսքի տառապանքն» է սա: Կող-
րումների լիովիտնից խոսքերը չեն բավականացնում
նրան, բայց հենց նույն լիովիտյան գրդումով նրանք եր-
կունքով նորից ու նորից ծնվում են և նորից ու նորից
շքեղացնում նրա, առանց այն էլ շքեղ, պոեզիան:

Սայաթ-Նովայի խաղերում նաև այլ կերպ է բա-
վարարվում խոսքի այդ «սովը»: Իր զգացմունքներն ար-
տահայտելու, իր սիրածի գեղեցկությունը գովելու հա-
մար Սայաթ-Նովան շարժման մեջ է գնում ամբողջ աշ-
խարհը՝ արեգակն ու տարերքը, դաշտ ու հովիտ, ծառ

ու ծաղիկ, թոշուն ու կենդանի, ոսկի ու ակնեղեն, մարդու ձեռքով կերտած հրաշալիքներ: «Աշխարհումըս ախ չիմ քաշի...» Հայտնի խաղի մեջ (24 հ), օրինակ, բանաստեղծն ասում է, որ յարի մեջքը սալրու շնար է, երեսի գուշնը՝ փուանզի ատլաս, լեզուն՝ շաքար, աչքերը՝ «օսկու միշըն մինա արած... թաս», նաև շալահիր է ու լալ, ոսկեղօծ վրան է, վարդերով շրջապատված այգի:

Սայաթ-Նովան կանգ է առնում շունչ քաշելու: Ամենին ինչ կարծես նա փորձեց, ել գովելու հնար չկա: «Աշխարհումըս բան չը մնաց», — ասում է նա: Բանաստեղծը, զովելով իր յարի դեմքի ու մարմնի բարեմասնությունները, սպառել է կարծես համեմատությունների համար աշխարհում եղած բոլոր ծաղիկները, բոլոր հոտավետ բույսերը, բոլոր համեմունքները: Բայց երբ նա, զիմելով սիրածին, իրար ետեից արագ-արագ շարում է այդ ծաղիկներն ու համեմունքները՝


Հուառվ հիլ, միխակ, դարշին, վարք,
մանիշակ, սուսանքար իս

A 25567
սիրածի գեղեցկության և հմայքի մեծությունը՝ զրանով նորից ու նորից կարծես նա զգում է ու զգացնել տալիս:

Անսպառ են Սայաթ-Նովայի հնարանքները, խոսքի նրա վարսետությունը:

Սայաթ-Նովան ոչ միայն խոսքի վարպետ է, այլև խոսքի խորունկ իմաստը հայտնարերող մտածող: Նրա խաղերից մեկը (13 հ) այսպես է սկսվում.

Խոսկիրը մալում իմ արի՝ անարատ մաքուր իս,
ա'խպեր:



Օսկե փարչումըն լրցրցած անմահական ջուր իս,
 ա՛խպեր,
 ևըմողըն վո՞ւնց կու կըշտանա՝ դուն կարնե
 ախպուր իս, ա՛խպեր,
 Աշխարհըն ծով՝ դուն մեշըն նավ, ման զու բաս՝
 փրեփուր իս, ա՛խպեր,
 Վախում իս թե՝ ինձ էլ էրիս՝ անհանգչիլի հուր իս,
 ա՛խպեր...

Այս տողերում շեշտված խոսվում է այն մասին, որ
 գողալի Հոգին վճիռ է, Հստակ: Գողալի բացարձակ
 անարատության այս բնութագրումը ունի իր ելակետը.
 Դա Հենց առաջին տողն է՝ «Խոսկիբըտ մալում իմ արի՝
 անարատ մաքուր իս, ա՛խպեր...»: Ուրեմն, այդ անա-
 րատության արտահայտիչը գողալի խոսքն է, նրա ասա-
 ծը: Այդ խոսքի մեջ, այդ ասածի մեջ բանաստեղծը
 նկատել է, մալում է արել, որ իր յարի Հոգին Հստակ է,
 շինց:

Խոսքի հանաշողական նշանակությունը, մարու
 անելու նրա հատկությունը առանձին ուժով հանդես է
 գալիս նաև մի այլ խաղում (47 հ):

Հիպնոսացած յարի հմայքով, Սայաթ-Նովան լրիվ
 ևնթարկվում է նրան: Բանաստեղծն աղերսում է յարին
 մի ուղի ցուց տալ իրեն, մի ելք. նոքարդ շես ուզում լի-
 նեմ — թույլ տուր օտարի պես ընկնեմ քո գոանը: Ու-
 ժասպառ, նա մեղմ հանդիմանում է յարին, ապա նորից
 ու նորից նրա գովքն անում: Բայց ոչ գովքն է Սայաթ-
 Նովային օգնում, ոչ աղերսանքը: Նա, կարծես, կորցրել է
 իր կամքը, իր եսը, անզոր փովել գետնին:

Սակայն, սիրո մշուշով պարուրված գիտակցության
 մեջ հանկարծ մի միտք է փայլատակում, մի Հուշ,

կա, այնուամենայնիվ, մի հենարան, մի առավեն, մի հույս՝ աշխարհի շափ մեծ, արևի պես պայծառ — դա նրա խոսքն է, նրա այրող, զմալող, մարդկանց հոգին կերպարանափոխող խոսքը.

Մարք իր խոսկով կու նանանչվի, գուզի Շահի վեզիր շինին,

— Կարդում ենք Սայաթ-Նովայի այս խաղում։ Այսինքն՝ խոսքն այն է, որ ենում է մարդու էությունից, նրա խորունկ նկարագրից։ Խոսքն այն է, որը ոչ մի արտաքին հանգամանքով չես փոփոխի. աննշան է՝ բամբ ձայնով նշանավոր չես դարձնի, շնչին է՝ թագավորի բերանում անգամ արժեք չի ստանա նա։ Ինչ շղարշով էլ կամենում ես ծածկիր մարդուն — խոսքը կմատնի նրան։ Ուզում ես բեղանակն վեքիլ դարձրու՝ դրանով նա ասըլ չի դառնա, որովհետեւ բեղանությունը նրա ներքին հատկանիշն է, վեքիլությունը նրան չի փրկի։ Խոսքը մարդու ի՞նչ լինելն իմանալու ավըցուր է, որովհետեւ անդրադարձնում է նրա ներքին բնույթը, բացահայտում նրան ըստ ամենայնիւ եռուքը գոյություն ունի ճշմարտության համար. ստի համար գործադրվելու դեպքում այն անխոսափելիութեն — այսօր թե վաղը — մերկացվելու է։

Ահա խոսքի այս ունակության՝ մարդու մասին խոկություն առելը (լինի այդ մարդը լավ թե վատ, խելոք թե հիմար, կեղծավոր թե անկեղծ), նրա ուժի գիտակցությունն է, որ համարձակություն է տալիս Սայաթ-Նովային, խթանում հորդորելու իրեն.

Սայաթ-Նովա, խոսկը ասա — բելլու
Տամանդարի բարար...

Ասա քո խոսքը, աշուղ, թող նա անվրեալ հասնի իր նշանակետին՝ հմտորեն ձգած նետի պես, նաև «ամենայն տիդ քու ասածը հազիր» կշինի, ամենուրեք կապրեցնի մարդկանց, թոփչը կտա նրանց, երազ կտա հոգուն: Սայաթ-Նովայի սիրան անհունորեն ընդլայնվում է, նա անդամ մի պահ մոռանում է իրեն մորմոքով տնտատասխան սերը ու տոգորվում մարդկանց խոսքով ազնը-վացնելու տենչանքով, նրանց բարձրացնելու, անմոռանալի, քաղցր րոպեներ մատուցելու իդով:

Խոսքը նոր, առավել հոյակապ խոսք է ծնում, նա ստեղծարար սկզբունք է, խոսքը ճանաչողության հորդառատ աղբյուր է, նրանից ճշմարտություն է ցայտում: Աշուղի էությունը հենց այդ ճշմարտության հայտնաբերման մեջ է, որով նա փայլ է տալիս մարդկանց ուրախությանը, մեղմացնում նրանց ցավը: Խոսքի սայաթ-Նովական ըմբռնումը հարստացնում է խոսքի արվեստի, պոեզիայի բովանդակությունը, սերտ զուգորդում է նրան ճշմարտության հետ, բարձրացնում աշուղի նշանակությունը:

3

Սայաթ-Նովան աշխարհիկ մարդ էր, անհանդիստ, կենսասեր: Բայց նա միաժամանակ քրիստոնյա էր, նրա հայրը՝ մահանախի, հետագայում ինքը՝ վաճական: Պար է, որ նրա հոգում ինչ որ պայքար, ինչ որ բախումներ պիտի տեղի ունենային երկու այդ իրարամերժ սկզբունքների միջև: Տասնվեցերորդ խաղը (Հ) հենց այդ մասին է խոսում:

Արփ ինձ անզան կալ, ա'յ դիվանա սիրտ, —

Հորդոր է կարգում ինքն իրեն Սայաթ-Նովան ու խոր-հուրդ տալիս, որ խոնարհ լինի, հետևի Հարանց վարքի խրատներին, անապատ սիրե, վանը սիրե:

Սակայն, թե՛ բանաստեղծությունն իր ամբողջությամբ և թե՛ մեջբերված նրա սկսվածքը վկայում են այն մասին, որ բոլոր այդ հորդորանքներն զուր պիտի անցնեն: Եվ իսկապես: Տպավորությունն այնպես է, որ խնդրող, աղերազ Սայաթ-Նովայի դեմ կանգնած է մի ուրիշ Սայաթ-Նովա՝ անհնաղանդ, շենթարկվող, որի կենդանի հոգին գժվար թե կարողանային ընկճել մեռած սենտենցիները:

Բանաստեղծության շարունակության մեջ Սայաթ-Նովան ասում է.

Ե՛կ, ա՛րի, սի՛րտ, մընա դուն մն դամադի...

Սա նույն հորդորի շարունակությունն է, առավել աղաշական, առավել խեղճացած, ե՛կ, ա՛րի... Սայաթ-Նովան առաջարկում է իրեն մի դամաղով, մի տրամադրությամբ ընթանալ, մի ուղի ունենալ — մենության, հեղության, աղոթքի ուղին: Բայց այս ինքնահորդումն էլ զուր է անցնում:

Բանաստեղծության վերջում, է՛լ ավելի նահանջելով, Սայաթ-Նովան ասում է, որ եթե այս բոլորն անես, եթե հոգուր խաթրու մարմնիդ ումբրը կես անես — երանություն կապրես: Բանաստեղծը եթե-ով է խոսում արդեն, պայմանական եղանակով: Իսկ ավարտական տողերւմ, կարծես, նպատակ ունենալով մի հարվածով իրեն ընկճել, նա մեջտեղ է բերում քրիստոնեական ամենամեծ փաստարկումը, աճեղ գատաստանի սպառնալիքը, բայց փոխանակ ճգմվելու նրա ծանրության տակ, նորից մինույն պայմանականությամբ խուսափում է

գրանից. թե գուզիս շդատապարտվութ ահեղ այդ գտառաստանին՝ լսիր հորդորիս, քարոզիս, խրատիս թե գուզիս...

Նա լսողներից, «անդամ կալովներից» չեր Սայաթ-Նովան ինքն իր սիրաը անվանում է դիվանա: Այսո՛, նա գիվանա էր, մոլեզին ու ոշինչ չեր կարող հաղթահարել նրա ազատասեր ոգին: Մենակության էլ գատապարտվեր — նա միշտ պիտի զգար իրեն մարդկանց հետ, բանտ նստեցնեիր նրան, խցի մեջ պարփակեիր — աշխարհը նրա հոգուց չեիր հանի:

Այդ է վկայում նաև Սայաթ-Նովայի մասին եղած հայտնի ավանդությունը: Ասում են, որ ամեն անդամ, երբ Թիֆլիս էր ժամանում որևէ նշանավոր աշուղ, Հաղպատի վանքի վանական Սայաթ-Նովան թողնում էր իր խուցն ու աղոթքը և շտապում քաղաք բաս մտնելու, ինչպես առաջներում, եկվորի հետ:

Կարող է պատահել, որ նման գեղք կամ գեղքեր տեղի չեն ունեցել: Կարևորը, սակայն, այն է, որ ժողովուրդը, այնուամենայնիվ, հորինել է այն, ստեղծել հատուկ զրույց այդ մասին, որով և արտահայտել է իր համոզմունքը, իր հավատը, թե Սայաթ-Նովան, իրոք, պարեգոտ հագած էլ, հոգով, այնուամենայնիվ, աշխարհիկ մարդ է եղիլ և այդպիսին էլ մնացել է մինչև վերջ⁹:

Սայաթ-Նովայի աշխարհիկ ոգին մի այլ կողմից է բացվում «Առանց քիզ ի՞նչ կոնկմ...» (21 հ) խաղում:

Սիրուց Սայաթ-Նովան այնքան է կորցրել ուշքն ու միտքը, որ այլևս չի կարողանում խաղ հորինել՝ հանգեցը մեկ-մեկ փախչում են նրա երեակայությունից, հասկացողությունից, փահմից, նա չի կարողանում նվազել, ձեռքից սաղն ընկնում է: Մի կողմից նա սիրում է, մյուս

կողմից նա իրավունք չունի սիրելու: Բայց բանաստեղծը մի գամաղով պետք է ընթանա, մի տեսանկյունից նայի աշխարհին: Կամ նա պետք է պատկանի իր զգացմունքին, կամ էլ աղատ լինի նրանից: Երկվոթյունը խորթ է նրան, «մէ ախտըրից էրկու տեսակ չուր չի գա» (38 տ): Հենց դրա համար է, որ նա ասում է.

ՄԵ դուզունքն էրկու դաղին ի՞նչ անե,
ՄԵ նոքարքն էրկու աղին ի՞նչ անե,
ՄԵ բաղմանչին էրկու բաղին ի՞նչ անե...

Ճիշտ է, Սալաթ-Նովան, կարծես, կողմնորոշվելով, ասում է, որ մազեղեն կհագնի ու վանքից վանք կթափահի, բայց մազեղենի տակ էլ շարունակում է տրոփիլ միենույն սիրող սիրառ, վանքի կամարների տակ թէ նա իր սիրածի հետ է. յարը շարունակում է մնալ նրա հոգու թագուհին: Սայաթ-Նովան, ստիպված, դիմում է մի նոր ճիշոցի:

Յըլքամ մէ մարք ուսան զա, վուր ինձ խըրասե,
Գո՛զալ, քու էշխեմեն սիրոքս ազատե...

Այդպիսով, խրատը Սայաթ-Նովայի վերջին առավելնն է գառնում ձեռք բերելու հոգու հանգստություն: Բայց ինքն թէ այդ մասին պայմանականորեն է խոսում՝ քըլքամ...: Էսկ մի այլ տեղում (51 հ) նա ուղղակի ասում է, որ նման մարդ գոյություն չունի. «ՄԵ մարթ չկա, վուր ինձ խըրաս հասասե...»: Սակայն, նման մարդ գտնվելու դեպքում էլ հայտնի է, թե խրատը, քարոզը որքան անկարող են աղքելու բանաստեղծի վրա, մարելու նրա սրտի րոցը: Ու խաղը նա վերջացնում է հետեւյալ տողերով.

Կանց յորըն իմասնասիրացըն շատ է
ևս Տու Սալար-Նովու բանեիրըն մեմեկ...

Այդ նշանակում է, որ Սայաթ-Նովայի ասելիքն՝
բանեիրըն այնքան են շատ, նրա հույզերն այնքան ա-
ռատ, նրա սերն այնքան բորբոքված, որ յոթն իմաստ-
նասերների խրատը՝ մաղեղենի և աղոթքի հետ միասին
գրոհելով էլ չեն կարող վերցնել այդ անառիկ ամրու-
թյունը:

Սայաթ-Նովայի ալեկոծ հոգին մնում է նույնը:
Ոչինչ չի կարող նրան «օրենքի» ափերի մեջ պարփա-
կել: Նա երկու մարդ չէ, շարունակում է մնալ մի մարդ,
սիրող և տառապող օրինազանց մարդ: Բանաստեղծի
համար մարդը հոգեկան ու ֆիզիկական իր ամբողջու-
թյամբ գերազանցելի է քրիստոնեորդն հասկացված հո-
գուց, այսինքն՝ ընկճված, ինքնաձագկված, մարդկային
բոլոր պահանջմունքները մեւցրած մարդուց:

Բանաստեղծի աշխարհիկ ոգին մի նոր կողմից է
դրսեորվում «Արի համով դուլուղ արա...» (37 հ) խա-
ղում:

Մտածելով աշխարհի լրա, Սայաթ-Նովան տեսնում
է, որ կյանքը լի է հակասություններով: Հենց այն, որ
կա բարին, բայց կա և նրա հակառակը՝ չարը, կա
կյանք, կա և նրա թշնամին՝ «մահն անկըշտում...»: Լավ
գննելով աշխարհը, տեսնում ենք նաև այլ, ոչ պակառ
խոր հակասություններ.

Վուրբն ախկատ, վուրբն օսկով մե զանգին,
Վուրին զինի, վուրին աղու մե բանգի.
Մեկը կոծե սագ, էն մեկն էլ իր շանգին.

ՄԵԼԻՆ դամ ու վայիլք, մելին՝ ցավ ու սու՛ (48 ա)....

Կամ՝ թերեւս ավելի պատկերավոր ու կենդանի.

Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն սու՛, վուր տիղ
սոյբար խաղ է ըլում.

Վուր տիղ ծամ, վուր տիղ պատարամ, վուր տիղ
սիրով տաղ է ըլում...

Այդպիսով, կյանքի ու մահվան, ուրախության և
սպի, աղքատի և հարուստի, մի կողմից՝ ժամ ու պատա-
րագի, մյուս կողմից՝ խաղ ու տաղի հակասություններ
կան, որոնք զուգորդվում են միմյանց հետ, փաթաթվում
իրար, միաժամանակ, ձեռք-ձեռքի հանդես դալիս: Ինչ-
պե՞ս զուրս դալ հակասությունների այս մճիմից, ինչպե՞ս
ափ հասնել:

Վերը բերած երկու տողին անմիջապես հետեղ՝

Թե վուր հոքուտ կամքն իս անում,
մարմինտ բեղամաղ է ըլում

տողը նախկին հակասությունների շարունակությունն է:
Բայց հարցն այն է, որ հոգու և մարմնի միջև չկա այն-
պիսի հակասություն, որպիսին, օրինակ, կա կյանքի և
մահվան միջև: Այդ հակասությունն ստեղծվել է պատ-
մականորեն, անիմիստական հասկացողությունների,
հետագայում կրոնի ազդեցության տակ: Ըստ էության,
հոգին չի բացառում մարմինը, մարմինը՝ հոգին, բայց
կրոնական մի շարք ուսմունքներ (այդ թվում նաև քրիս-
տոնեությունը) դրանց հակադրել են միմյանց, անշա-
տել երկու այդ երեսութներն իրարից, վիճ փորել նրանց
միջև, ըստ որում հոգին հայտարարվել է անմահ և սուրբ,
իսկ մարմինը՝ մահկանացու և դատապարտման ենթա-

Դա: Սակայն, պատմականորեն էլ ստեղծվելով, այդ հակասությունն ընկալվել է որպես ամենամեծ, ամենաիրական հակասություն ու հենց այդ ամենամեծ, զառամ ու քարացած, մեռած գոգմա դարձած հակասությունն է, որ Սայաթ-Նովայի կենդանի հոգին տնվախ մերժում է: Որովհետև, ասելով, թէ Հոգուդ կամքը կատարելով մարմինդ բեղամաղ հս անում, գրանով հենց ընդգծվում է, որ չի կարելի բեղամաղ անել, չի կարելի զրկել, վիրավորել մարմինը:

Հոգու և մարմնի «հակասության» նման լուծում միայն այս տողերում չէ նկատվում, այլ նաև նրան նախորդող տողերում, որտեղ ասված է, եթե այս կյանքի փառքը մերժես, այն կյանքում ալմաս կստանաս, եթե հոգուդ փրկության համար շալ հագնես, այն կյանքում ատլաս կհագնես — երկրայինի մերժումը նորից երկրայինով է հատուցվում:

Վճռականորեն անցնելով հարսանիքի ու տաղի կողմը և հեռացնելով իրենից սուզը, Սայաթ-Նովան հենց այս խաղում էլ տալիս է իր հավատամքը, իր հոշակավոր խորունկ խոսքն ասում կյանքում կատարելիք միսիայի մասին.

Արի համով դուզող արա, խալիսի նոքար

Սայաթ-Նովա...

Սայաթ-Նովան ծաղրում է նրանց, ովքեր անտարբեր են, մեկուսացած են, հեռու են պահում իրենց հասարակությունից, խալիսից.

Հեսաի մարք կա, խիլքը վուտքի միշտմն է,

Հիռու ժաշված, կինքից խարար-բան շունե (26 ա)...

Բայց ուշագրավէ, որ ինքը, ընդհակառակը, խաբար ունենալով աշխարհից, գտնվելով կյանքի կենտրոնում, ծառալելով իր նմաններին, այդ ամենը, այդ դուզուզը կապում է աշխարհիկ ոգու հետ: Խալիխն կարելի է ծառայել, նրա նոյնարդ դառնալ ոչ թե հոգեսրական, այլ աշուղ, սասագանդար լինելով,— ասում է Սայաթ-Նովան: Մի միտք, որ խիզախ ու համարձակ էր այն դարում, երբ կրոնը տակավին ընկածված չէր ու նրանով էին պայմանավորված կյանքի և կենցաղի շատ ու շատ խընդիրներ, երբ արվեստագետը արհամարհված էր, իսկ կրոնավորը գտնվում էր սոցիալական բուրգի կատարին: Աշուղությամբ միայն կկարողանաս արտահայտել մարդկային բազմությունների վիճակը, նրանց ցավերը, նրանց հուզերն ու իղձերը, զրանով միայն կարելի կլինի սփորելո, բարձրացնել նրանց.

Ով ժիզի լիդի պարբիվե, դուն տու շաբար,

Սայաթ-Նովա...

Սայաթ-Նովան հաղթահարում է իր առջև ծառացած հակասությունը. կյանքն անընդհատ հարվածում է, դառնացնում նրան, նա անընդհատ լեղի է ստանում, բայց հենց այդ լեղին է, որին հակադրվելով՝ նա ծորում է շաբար, հյուսում հիասքանչ երգեր, միշտ լավատես մնալով, միշտ հավատացած, որ «անբարի գուրձըն կորած է», որ ճշմարտությունը հաղթանակելու է:

«Երի համով զուզուղ արա...» խաղը, նախորդ խաղերի պես, բանաստեղծի ներքին պայքարի մի վկայագիրն է: Այստեղ էլ Սայաթ-Նովան հաստատելով աշխարհը, խոսում է նաև քրիստոնեական զղջման մասին, ակնարկում է Հարանց վարքը, գեգերում, «վո՞ւր մե դարձին կու դիմանաս դուն ջըրատար Սայաթ-Նովա...»,—

ասում է նա վերջում։ Բայց ներքին պայքարի վկայագիրը լինելով, խաղը միաժամանակ այն ուղեգիրն է, որով բանաստեղծը կանցնի պատմության բոլոր արահետներով, որպես մի մարդ, որը դեն նետելով նախապաշարմունքները, աղատազրվելով անցյալի ծանր բեռից, արտափայլել է իր ստեղծագործության մեջ մտերիմների, իր պես մտածողների, հասարակական հարազատ շրջապատի ամենաթրթուն հույզերը ու դրանով ծառայել ուրիշներին։ Այդ ծառայությունը հենց այն է, ինչ մհեծարվում է քյամանչին նվիրած խաղում։ Երկու խաղերը գաղափարապես սերտ կապվում են իրար հետ ու հասուն մտքի, կյանքի նկատմամբ ունեցած պայծառ վերաբերմունքի արտահայտություն են։ Երկուսի գրության թվականներն էլ շատ մոտ են իրար. «Քամանչան», ինչ-պես գիտենք, 1759 թվականին է գրված, «Արի համով...»-ը՝ մի տարի առաջ, 1758 թվականին։

II

ՍԻՐՈ ՀՅԱՎԱՆՑՆ ՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

1

Սայաթ-Նովային գերազանցորեն անվանում են սիրո երգիչ: Դա հասկանալի է. նրա երգերի ճնշող մեծամասնությունը նվիրված են սիրո զդացմունքին: Այդ երգերը բխում են ի խորոց սրտի, զիալչում են հոգու ամենանորը լարերին, անհունորեն մարդկային են, նըրպագեղ: Ահա դրանցից մեկը (2 հ):

Պատկիրելու դալամով ժաշած, քահրելու ռանգե
ռանգ իս անում.

Էրեսիս խալըն ծածկվում է՝ մազիրը
խափանգ իս անում.

Բացվիլ իս կարմիր վարքի պես, բըլբուլի նիդ
հանգ իս անում.

Ակուելու օսկումըն շարած, պրոռշը մահանգ
իս անում:

Էրեսը նուր լուսնի նըման ժանի կենա,
կու բոլըրվի.

Դաստամազը նամ չի ուզի՝ առանց նուսիլ
կու օլըրվի,

Էնդու համա բու տեսնողըն իր նանփեմնն
կու մոլորվի՝
Յիփ մըտնում իս մեջլիսումըն, շանգ շուխի
շաքանգ իս անում:

Էրեսրտ տեսնելու զու հան հաղամ հաղկով,
զիվ՝ զիդի պէս.
Միոնողըն ժիզմեն կու առնե անմահական դիդ՝
դիդի պէս.
Յիփ տիդեմետ ծած իս գալի, շըլսշըլսկում իս
շիդչիդի պէս.
Ե՞նչ կոնիմ սանրուր համանչեն՝ զուզարտ
շոնզուր, շանգ իս անում:

Շուցիս մեշըն վարը, մանիշակ, սընբով
ու սուաան իս շիճի.
Քու տերըն բաղըն ի՞նչ կոնե՝ բու հուարն
ոեհան իս շիճի..
Քամին մեշըն անց է կենում՝ մազիրըտ
ելքան իս շիճի..
Աշխարքըն ծով, դուն մեշըն նավ — ման իս
գալի, լանգ իս անում:

Տասնեմետ մեկըն շին ասի, թեզուզ աշխարըս
ժիզ գովին.
Նովափար ծաղիկ ծովային, մանիշակ բաց
արած հովին..
Բաս բու էշխին վո՞ւնց դիմանամ, շուրըն
տանե Սայար-Նովին..
Թե տեսնողըտ մեկ էլ տեսավ՝ դիվանա-դաքանգ
իս անում:

Թվաւմ է թե մի հանք է սա, բայց ոչ սովորական՝
այլ այնպիսի մեծահարուստ մի հանք, որ միանգամից
փայլում է զոյություն ունեցող բռնոր աղնիվ մետաղ-
ներով, ամեն տեսակի անդին քարերով։ Երանդների
բազմապիսությունը, պատկերների գանազանակերպու-
թյունը ոչ թե խանգարում են, այլ, ընդհակառակն, ավե-
լի միաձույլ են դարձնում սիրածի կերպարը։ Ոչ մի բառ,
ոչ մի արտահայտություն անշարժ չէ այստեղ, այլ, վեր-
ջապորված լինելով, միաժամանակ անհուն, նորանոր-
ծիլեր արձակող կարելիություններ է կրում իր մեջ։

Եվ իսկապես։ Դու նորած լուսին ես ու նրա պես-
քանի պնում, առավել գեղեցկանում ես, բոլորվում, փո-
փոխվում։ Դու այդի ես՝ մեջը վարդ, մանուշակ, սնբուզ
ու շուշան։ բայց քո տիրոջն ինչի՞ն է պետք այդ այդին,
երբ քո բուրմունքը գերազանցում է ոեհանին։ Դու
փթթել ես, բացիկ ես վարդի պես՝ հասել ես գեղեցկու-
թյան գագաթնակետին, ու հենց այդ բարձունքից է, որ
ձայնակցում ես բլբուկին։ Խալքդ այնքան է գեղեցիկ, որ
մազերդ խանդից ծածկում են նրան։ Բայց նրանք էլ են
անհունորեն գեղեցիկ ու թրջվելու կարիք չեն զգում, որ-
պեսզի ավելի գեղեցկանան՝ ոլորվեն։ Պատկերդ, իսկա-
պես, դաշտով է քաշած, բայց քո կերպարանքը լրիվ չի
պարփակվում դրա մեջ, քո երեսի գույները ոչ մի դաշտ
չի կարող ներկայացնել։ Թող աշխարհը ծով լինի, բայց
դու ես գեղեցկացնում այդ ծովը, դու ես նրա մեջ օրորվող
նավը, քո մազերն են առագաստ դարձել։ Դու անմահու-
թյան սկիզբ ես, աշխարհիս մեծությունն անգամ անզոր-
է քո գեղեցկության համբարքն անելու։

Սայաթ-Նովան ուժ շոնի դիմադրելու սիրածի Էշ-
խին։ Բայց ոչ միայն Սայաթ-Նովան։ Գյուղերն ու քա-
ղաքներն էլ կարու են նրա հմայքին, նա մարդկանց

շեղում է ճանապարհից, մոլորեցնում նրանց, խելացնոր
անում: Նա անդիմադրելի է բոլորի համար: Սայաթ-
Նովան էքստազի մեջ է, անարատ ու անշահագրիո մո-
ռացման մեջ, աշխարհի դռները բայց բացված են, բա-
նաստեղծի հոգին անեղբացած, ուրիշների երկրագումն
իր սիրածին ցավ չի պատճառում նրան: Նրան չեն կաշ-
կանդում սրտնեղիշ կրքեր, նրա խանդաղատանքն, ընդ-
հակառակն, առավել խորանում չէ, սիրածի գեղեցկու-
թյունն առավել շեշտվում:

Ոգեշնչված իր սիրածով, Սայաթ-Նովան բնավլ չի
կտրվում ունալ իրականությունից ու հենց այս խաղս
ցուցց է տալիս, թե որքան ուժեղ է նրա դիտողականու-
թյունը, անգամ մանրունքների նկատմամբ, որքան նա
ի վիճակի է ամեն ինչ տեսնել ու այդ տեսածի վրա է
հենց, որ կառուցվում են նրա երազները:

Այլ խաղերում էլ նկատելի է, թե ինչպես Սայաթ-
Նովան հատուկ ուշագրություն է դարձնում իր սիրածի
դեմքի, կեցվածքի, հագուստի մանրամասնությունների
վրա — սանրվածք, խալ և ալլն — և անգամ միջամտում
սիրածի «զուբսին», դիտողություններ անում նրան, խոր-
հուրդ տալիս, օրինակ, որ ընդգծի իր գեղեցկությունը,
սրովհետեւ ամեն մի ընդգծում ճիգ է, իսկ գեղեցկությունը
ճիգ չի սիրում.

Վիզբա մարալ-ջեյրանի է, ել անտիդի մի ձըքի
(Յա):

Գույներն էլ կախարդում են կյանքին սիրահարված
քանաստեղծին: Ի՞նչ ասես շարժե հետեւալ հոշակալու
տողը.

Դուն կըրակ, համածրտ կըրակ, վո՞ւ մե կըրակին
դիմանամ,
որտեղ «Հաքածըտ կըրակ» արտահայտությունը նշանա-
կում է կարմիր, ալ¹⁰: Դա սոսկական կարմիր չէ, այլ
վառ կարմիր, կրակին հասցրած, մոխրացնող կարմիր:
Կամ՝

Քի սազ գույք ծեմի գունեի ծիրանին (26 վ)

տողը, որտեղ բոց կարմրից, Հրդեհից բանաստեղծն
անցնում է մեղմ, լիրիկական երանգների:

Միրածի ովելնչված պատկերը, նրա արտաքին
նկարագիրն այնքան են թափանցիկ, այնքան բյուրեղյա,
որ կարծիս Հայելի են դառնում՝ արտացոլելու նրա ներ-
քին աշխարհը:

Միջնադարյան բանաստեղծների մասին այն կար-
ծիրը կա, որ նրանք չեն թափանցում կնոջ ներաշխարհը:
Դա հնարավոր է: Տաղերգուն սիրում էր կյանքը, բայց
դեռ ընդհուպ չէր մոտեցել նրան ու, թերևս, կարող էր
բավարարվել սոսկ կնոջ տեսքով, ընկալել նրան որպես
բնության շարունակություն, նրա պերճ մի հատլածը:
Այլ էր աշուղը: Նա կյանքի մարդ էր, անընդհատ շփման
մեջ էր հասարակության հետ, մասնակից էր հավաքութ-
ներին, մեջլիսներին: Պարզ է, որ երկրագեղելով սիրո
և կնոջ առջե, նա արդեն պետք է սուզվեր նաև նրա հոգե-
կան աշխարհը:

Երբ Մայաթ-նովան ասում է սիրածին, թե կուզես
«զըռանըտ կամ ովաստ» (19 հ), — զրանովնա հենց կանգ-
նում է կնոջ ներաշխարհի շեմին, ընկալում է նրան որ-
պես սրբություն ըստ ամենայնից՝ արտաքին և ներքին
առումնով: Երբ նա ասում է, որ յարի խոսքի միջոցով
մալում է անում, դրսեորվում է նրա հոգու անարա-

տությունը — դա արդեն ներսուզում է կնոջ ներաշխարհը՝ այդ ներաշխարհի մաքրության ճանաշում։ Երբ բանաստեղծն ասում է, որ յարի բառը վարդ է (19 ա), լեզուն բզբուկի (2 վ), ասել-խոսելը քաղցր (4 վ) — դա նորից կնոջ ներաշխարհի ճանաշում է, այս անդամ արդեն այլ էողմից։ Առավել իրականորեն է բացվում կնոջ ներքին աշխարհը «Ինձ սիրեցիր, էշխըն ընդար...» խաղում (23 հ, «Աշխարհումը ախ չիմ քաշի...» խաղը սրա պատասխանն է): Այստեղ Սայաթ-Նովան, վարպետորեն օգտագործելով աշուղի դավրարի պատկերը, իրական գույններով բացահայտում է կնոջ սիրո խորությունը, նրա նվիրվածությունը սիրած տղամարդուն։

Կնոջ ներքին աշխարհը վարագուրող քողը Սայաթ-Նովան ետ քաշեց, որով և առավել գեղեցկացավ, առավել իրական դարձավ յարի նկարագիրը։

Յարն ըստ ամենայնի կատարելություն է թե՛ ներքին և թե՛ արտաքին իմաստով, նրա գեղեցկությունն ամենակարող է, մեռնողին նա անմահության դեղ է տալիս, մութ տեղը լույս տալիս (39 հ), իր հմայքը նա տարածում է շրջապատի վրա։ «Ինչի դիրշիս նաղըշ կոնիս» (46 հ), — դրում է նրա մասին բանաստեղծը։ Ահա գոզալը զբոսնում է այգում ու, — ասում է Սայաթ-Նովան, —

Գեղինըն զարբարվեցավ իմ յարի օսկե նալով (14 հ)...

Գեղեցկությունը դուրս եկավ իր սահմաններից, դրոշմեց իր ուժը յարի թողած հետքերի վրա։ Յարը կարող է թողնել այգին, հեռանալ. Հեմելիքը կշարունակի վարդարմած մնալ այդ հետքերով։ Բայց մի՞թե հենց միայն իր քայլվածքով է գոզալը գեղեցկացնում աշխարհը։ Ոչ, ասում է Սայաթ-Նովան միենույն խաղում։

Յիփ լու սուրաբն կու բաշին՝ նախշումն
շընուի՛ կու տաս-
կու վրովոս երամի պես՝ սաղշումն
շընուի՛ կու տաս-
Մըշկով լիբն բրոյի պես, բաղշումն
շընուի՛ կու տաս-
Բաց կուլիս կարմիր վարքի պես՝ բաղշումն
շընուի՛ կու տաս...

Սաղշան, պատին դրած աղյուսը, կենցաղային
պրողաիկ մի առարկա է: Բայց նա պոհտիկ է դառնում,
նա գեղեցկացնում է սենյակը, երբ նրա վրա դրած ճրա-
զը համեմատվում է գողալի հետ, գողալը շնուի՛, շնորհը
է տալիս նրան:

Թաղշան, պտրհանը, սենյակի նույնպես սովորա-
կան մի մասն է, բայց երբ նրա վրա դրած մուշկով լի-
բյուրեղյա սրվակը համեմատվում է գողալի հետ, այն
ևս պոհտիկ է դառնում, այն ևս գեղեցկացնում է սե-
նյակը, նրան ևս գողալը շնուի՛ է տալիս:

Բայց չէ՝ որ թաղշան ինքն արդեն մի գեղեցկություն
է, իսկ վարդը՝ գերազանց գեղեցկություն: Ինչպի՛ս է
պատահում, որ գողալը նրանց ևս գեղեցկացնում է,
նրանց էլ շնուի՛ է տալիս: Այնպես, որ գողալի գեղեց-
կությունը անսահման է, այնքան մեծ ուժ է պարունա-
կում իր մեջ, որ եղած գեղեցկությանը մի նոր գեղեց-
կություն է ավելացնում:

Վերջապես, նախշը, նկարը, արմեստի գործ լինե-
լով, ինքնին նույնպես մի գեղեցկություն է. բայց այդ
գեղեցկությունը, այդ շնուի՛ը կրկնապատկվում և բազ-
մապատկվում է, որովհետեւ այնտեղ արտացոլված է
հենց աստվածային գեղեցկության տեր՝ աշխարհի միակ

գողալը, Սայաթ-Նովայի գողալը: Նա իմաստավորում է կյանքը, սովորականը դարձնում անսովոր, տղեղը՝ գեղեցիկ: Ամենուրեք տեսանելի է նրա փայլը, շափաղը:

Գողալի հմայքը սփռվելու մոտիվին հանդիպում ենք նաև այլ տեղերում: «Թամամ աշխար պըտուտ էկա...» խաղում, օրինակ, կարում ենք.

Թէ խամ համնիս, թէ զար համնիս, կու շինիս
դումաշ, նազանի...

Միրածից ելնող ճառագայթներն այնքան են ակնապարար, որ իրենց փայլով ողողում են ամեն ինչ, լցնում շրջապատը, իրենց քաշում, իրենց հավասարեցնում չորս բոլորը: Դրա համար է, որ խամ կտորը նա հասցենում է դումաշի, երկաթը՝ ոսկուն, հասարակ քարը՝ ալմասին, այնքան հրաշագործ է նա:

Միջնադարյան տաղերգումների ստեղծագործության մեջ բնության գովքը մեծ տեղ է գրավում: Սայաթ-Նովայի խաղերում քիչ ենք հանդիպում բնության գեղեցկությունների անմիջական վիրապատկերմանը: Մի տեղ, օրինակ, նա ասում է. «Էրանի ծիղ, ծաղկած վարիր,... մանիշակով լիքըն սարիր» (33 հ), Բայց հենց այս հատվածը վկայում է, որ բանաստեղծը ուներ բնության նուրբ զգացողություն: Եթե նա ասում է՝ «Եկ զընանք չոլըն, վուր համենինք գոլըն, ջերանի վախտ է» (29 հ), զրանով նա զիշերվա խաղաղ ժամը, ջերանների նազով անցնելը զաշտի միջով՝ հաղեցնելու իրենց ծարավը լծի պաղ ջրերից,— այս ամենը նա ընկալում է որպես արձագանք իր ապրումների կամ հակառակը:

Երբ նա ասում է՝ «գըժվիլ իմ Արագի նըման» (8 հ), — դրանով սերտ կալ է ստեղծում սիրուց փոթորկված իր հոգու և Արաքսի ջրերի մոլեգին երթի հետ, այնքան սերտ, որ ընթերցողը չի էլ զգում անցումը ներքինից դեպի արտաքին աշխարհը կամ հակառակը:

Սայաթ-Նովայի բնության նուրբ զգացողությունն առավել ճոխ է արտահայտվում գովալին գովերգող տողերում: Յարի գովքն անելով բնության միջոցով, Սայաթ-Նովան զրանով բնության գովքն էլ է անում: Սիրելով, լավ իմանալով բնությունը, բանաստեղծը նուրբ անցումներ չ կատարում նրա զանազան դրվագներից դեպի իր գովալը, առնչություններ տեսնում, նմանություններ հայտնաբերում նրանց մեջ, շեշտակի, հաճախ անսպասելի համեմատություններ անում:

Զեյրանի պատկերը հաճախ է հանդես գալիս Սայաթ-Նովայի խաղերում: Խաղերից մեկում բանաստեղծն ասում է իր սիրածին.

Կրակե, ծովեմեն դու Էկած ուաշ ու զեյրան իս
ինձ ամա (24 հ)...

Կլանված աղջկա նազանքով, մի այլ խաղում ասում է.

Աստված վրկա, սիրու էրից զեյրանի նըման
ման զալը (13 հ)...

Աղջկա տրոփող սրտի մասին ասված է.

Վուսնուրի ձեռիցըն փախած զեյրան, մարալ
արմանալու (46 հ)...

Վերջապես կարդում ենք.

Չոլումն ազատ քողած զեյրան, մարալ իս (5 վ)...

Գոզալը կապվեց շոլի հետ, գաշտի հետ, հասալ
մինչև ծովի հեքիաթային խորքը, իր մեջ վերցրեց շեյ-
րանի աղատասիրությունը, նրա սրտի տրոփը, նրա սա-
հուն քայլվածքը: Երականության մեջ համարյա խորշ
չկա, որին Սայաթ-Նովայի պոետական ժառածողությունը
հաղորդակից շդարձնի իր սիրածին.

Գրլիսին սիպտակ ձուն դրբած սար,
բոլորքու զառ-մանիշակում (8 Վ)

— մեղ հայտնի չէ, թե ուրիշ ո՞ր պոետն է լնդհանրու-
թյուն տեսել լեռան ձյունափառ սառը գաղաթի և իր
արքակալմ, շորս կողմը շերմություն փոռղ սիրածի մի-
ջև: Բայց Սայաթ-Նովան տեսնում է այդ՝ շեշտելով գա-
ղաթի անհասանելիությունը և ձունի սպիտակությունը,
որ անարատություն է հիշեցնում:

Ելս և նման դյուտերով Սայաթ-Նովան լուս աշ-
խարհ է հանում գոզալի մեջ նիրհած նոր գեղեցկություն-
ները, ավելի տեսանելի և շոշափելի գարձնում նրա կեր-
պարը: Սակայն այս ամենը չի բավարարում՝ բանա-
ստեղծին: Անհաշիվ են յարի բարեմասնությունները, ան-
հաշիվ է բնության, աշխարհի հարստությունը, անհաշիվ
Սայաթ-Նովայի կարողությունը՝ տեսնելու այդ հարստու-
թյան շափակցությունն իր յարի հետ: Եվ ահա ամբողջ
աշխարհը, բանաստեղծի տեսած ու շտեսած, մոտա-
վոր ու հեռավոր երկրները, — սրանցից շատերի տարաշ-
խարհիկ բարիքներով բեռնված քարավանների զրնգոցը
հասնում էր Թիֆլիս, — այդ երկրները իրենց հրաշալիք-
ներով հանգերծ ի սպաս են գոզալին, առավել
բարձրացնում նրան, ասեղնագործում նրա պատկերը:

Գոզալը Մորու բեհեղ է (9 ա), Վենետիկի զար

(4 լ), Արագստանի (Քրաք) ղումաշ (9 ա), Շիրազի շուշա (6 հ), Բաղդադի կռունկ (24 լ), Իզմիրից եկած գարնան հով (4 լ).

Մե նաղշբտ Արաք անցկացավ, մե նաղշբտ
Հընդբստան գընաց,

Մե նաղշբտ Ղըրիմ անցկացավ, մե նաղշբտ
Դաղբստան գընաց,

Մե նաղշբտ Ռուսմել կացավ, մեկըն
Ֆրուանգըստան գընաց (25 հ)...

Սրանից բացի էլ ի՞նչ երկրների անուն ասես չի
տալիս Սայաթ-Նովան գողալի գեղեցկությունն առավել
քացահայտելու համար. Զինումաշին ու Հաբաշ, Ղըբըրզ
ու Սակիզ, Բալխ ու Բուխարա: Արևմուտքում նա հասնում
է մինչև ինգիպոների երկիրը: Սակայն, գողալի պատ-
կերն է՛լ առավել է բացահայտվում, երբ բանաստեղծը
զիմում է Հնդկաստանին, Ցին ժամանակներում իր ան-
հուն ու պես-պես հարստություններով հոչակլված կա-
խարդական այդ երկրին. «Հինդու դիարեմեն էկած զար
դալամքար իս» (7 հ), «Հընդկաց քաղաքիցն հանած
չափահիր քար» իս (46 հ), «Գունքը Հնդստանի մում է»
(60 հ), «Հնդու ջավզ ու հիլ, միխակ իս» (2 լ), «Հնդըս-
տանի թութի զուշ» իս (24 լ)...

Պատկերները թափվում են կարծես առատության
և զջուրից, բայց այդ շտեսնված լիությունը չի ճնշում,
չի նեղում լսողին կամ ընթերցողին, որովհետև ինչպես
գողալի գեղեցկության մեջ է ամեն ինչ շափով, այն-
պես իւ այդ գեղեցկությունը բացահայտող խոսքն է շա-
փով: Գողալի նկարագիրը չի խճողվում, նա մնում է
իր բարձրության վրա:

Այս ամենը հայտնաբերող ասոցիացիաները Սայաթ-Նովան խորապես զգացել է, ապրել. դրանք ելնում են նրա հիասքանչ վերաբերմունքից դեպի աշխարհը, իրականությունը, մարդը: Գողաճն այդ հիասքանչ վերաբերմունքի կիզակետն է, գոյության բարոյականիմաստային և էսթետիկական բարձր դնահատման մարմնավորումը:

2

Ամենամեծ հակասությունը, որ զբաղեցնում էր միջնադարյան տաղերգուներին, դա հոգու և մարմնի հակասությունն էր: Այդ հակասությունը սուբյեկտիվ արտացոլումն էր այն օբյեկտիվ պրոցեսի, որ տեղի էր ունենում իրականության մեջ՝ կյանքի և մտայնության աշխարհականացում, կրոնական աշխարհը մբռնման նահանջ: Հոգու և մարմնի հակասությունը, մեղմանալով ժամանակի ընթացքում, XVII դարի վերջերից սկսում է ապրել ճնշաժամ: Եթե Թղթուրանցու և Աղթամարցու ստեղծագործություններում տակալին նկատելի է, որպես այդ հակասության արտահայտություն, «ցավագին շեշտ», ապա «Ճունաթանին», — ասում է Մ. Արեգյանը, — այլևս բնավլ չի տանջում հոգու և մարմնի հին կոփիլը»¹¹: Ճունաթանը հայլասարակշուկած է ու բարձր դնահատելով կյանքը՝ հանդիստ վայելում է նրա պարզեած ուրախությունը:

Այլ էր Սայաթ-Նովայի վիճակը: Շարունակելով ու խորացնելով Ճունաթանին, նա ավելի քան բարձր էր դնահատում կյանքը, բայց շուներ իր նախորդի հոգեկան անդորրությունը: Դրա պատճառն այն չէր, որ հոգու և մարմնի «հին կոփիլը», որ թիւում էր արդեն ավարտված, բռնկումներ ունեցավ նրա մոտ: Մեղ

Հայոնի է, որ այդ բռնկումները, հետաքրքիր լինելով և յուրահատուկ երանգավորվելով, այնուամենայնիվ ճակատագրական չէին Սայաթ-Նովայի համար: Սայաթ-Նովան աշխարհիկ մարդ էր ու աշխարհայինը վերջ ի վերջո պիտի հաղթանակեր նրա մոտ և հաղթանակեց: Մակայն, հենց այն պատճառով, որ նա աշխարհիկ էր ոտից մինչև զլուխ, հենց այդ պատճառով նրա առջև բացվեցին այնպիսի հակասություններ, որոնց հանդեպ շատ փոքր է թվում հոգու և մարմնի հակասությունը:

Միջնադարյան բանաստեղծներն աշխարհը տեսնում էին այնպիս, ինչպիս մենք սովորական աշքով տեսնում ենք լուսինը: Միանգամայն այլ էր Սայաթ-Նովան: Աշխարհը, կյանքը նա տեսնում էր այնպիս, ինչպիս այսօր լուսինը կարելի է տեսնել արդեն ամենակատարելագործված աստղադիտակով՝ բոլոր խորդուրորդություններով ու ճեղքվածքներով հանդերձ:

Թրիկը, իհարկե, տեսավ այդ ճեղքվածքներն ու դեռևս XIII դարում իր հզոր խոսքն ասաց հասարակական անարդարությունների գեմ: Բայց ժամանակաշրջանն այնպիս էր, որ նա հանդես եկավ որպիս ավելի մտածող, քան կյանքի մարդ, պրակտիկ անձնավորություն: Հովնաթանն էլ, ժամանակական առումով շատ ավելի մոտ լինելով մեզ, այնուամենայնիվ, գեմ շառավ սոցիալական կյանքի սուր հակասություններին և ապրեց անվիշտ, որպիս էպիկուրիտական: Սայաթ-Նովային էր վիճակվել ապրելով, գործելով ու գեգերելով կյանքի ամենից բանով ճանապարհներին, շփովելով հասարակության տարրեր խավերի հետ, իր նման պարզ մարդկանցից սկսած մինչև թագավորն ու նրա շրջապատը՝ իր ամրող էությամբ զգալու այդ հակասությունների մեծությունը, նրանց կործանարար ազդեցությունը: Նա-

կոնֆլիկտի մեջ էր արդեն ոչ թե ինքն իր հետ, — զահանձնված էր պատմությանը, — այլ աշխարհի հետ, կյանքի հետ:

Սայաթ-Նովայի պոեզիան որոշվում է հենց այդ կոնֆլիկտով. կոնֆլիկտ, բախում կենսահաստատ աշխարհընկալման և ֆեոդալական իրականության դժու պայմանների միջև, որոնք իրենց ամբողջ անհրապույք մերկությամբ փովել էին բանաստեղծի առջև: Ու այն մարդը, որն այնքան լիասիրու և հրճվանքով էր ընդունում գոյությունը, զգաց իրեն տրորված, կատարելապես դժբախտ:

Սայաթ-Նովայի մոտ մի հատիկ «տաղ ուրախության» չեք գտնի: Նրա բոլոր խաղերը համակված են ինչ-որ տիսրությամբ: Թերթինք նրա բանաստեղծություններն առաջինից մինչև վերջինը — կոկիծը ամենուրեք ուղեկցում է նրանց: Նրա սրտից արյուն է կաթում (12 հ), նրա զլուկը մահվան ճանկում է (15 հ): Որպիսի՞ թափիծ է ծորում «Դու մի լաց լի, յիս իմ լալու» (9 հ) հաւանի տողից: Քանի-քանի՛ անդամ ըլլուկին նաղարիր է անվանում, այդ բարի մեջ կարծես բովանդակելով իր օտարացումը աշխարհից, մարդկանցից, յարից: Կարուտ նա միշտ երգել է, հաղթանակ՝ երբեք:

Սայաթ-Նովան չի երգել խրախճան, խնջույք, սեղան: Մեջլիսը նրա համար խնջույք չէ (1 հ, 8 հ, 6 վ): Երբ Հովնաթանի մոտ գինի ես տեսնում, զգում ես, որ նա վայելում է այդ գինին, վայելում է առհասարակ աշխարհն իր համակ քաղցրություններով: Սայաթ-Նովայի մոտ վայելք չես տեսնում: Մի անդամ միայն նա հորդորում է իր յարին գինի խմել (26 վ): Գինով լըցրած թան էլ վայելք չէ նրա համար: Նա կարող է լցված լինել անոշահամ գինով (1 հ), բայց և անմա-

Հական ջրով (13 հ): Իիքը թասն է նրան Հետաքրքիր, որպես մտերմովթյան առհավատշյա, սիրո սիմվոլ, բայց ոչ ուրախովթյան:

Սերն էլ Սայաթ-Նովայի համար հրճվանք է, սքանչացում, բայց ոչ վայելք: Բանաստեղծը հաճախ է իր ձակատագիրը նմանեցնում արևելյան սիրավեպերի հերոսների՝ Բահլուկի, Մեջլումի կամ Ֆահրադի հետ (27 հ, 12 ա, 9 և այլն), սրոնք տոգորված մեծ, բուռն սիրով, բայց գեմ առնելով կրանքի հակասություններին, — սոցիալական, կրոնական և այլ, — վերջ ի վերջո դժբախտանում էին, խորտակվում: Կամ նմանեցնում է փարուխային, որը, անհուն զգացմոնքից մոռացված, պտըտվում է իր հրե տարփածուի շուրջը ու պտտվելու հետ միասին հրկիվվում, մոխրանում (28 ա, 12 ա, 4 և այլն): Սրանք բոլորն էլ սքանչացում են ապրում, կապված տանջանքի, տառապանքի, անգամ մահվան հետ: Այդպեսն է և Սայաթ-Նովայի սերը. սքանչացում, հրճվանք, անխողելիորեն ծովված նույն տառապանքի հետ:

Վերցնենք օթանի վուր ջան իմ....» Հանրածանոթ խաղը (29 հ): Եյս խաղի հիմնական մոտիվը թախանձանքն է, իլրիմազը, որի մեջ մերժված սերն է նրբորեն ցոլում իր խոր թախիծով, իր հեռավոր հույսերով ու մոտավոր, անխուսափելի հիասթափությամբ հանդերձ:

Շվարած, բանաստեղծը խաղում դիմում է յարին՝ «արա ի՞նչ անիմ» հարցով. Հոգո՞ց հանեմ, արտասո՞ւր թափեմ: Յար, դու ասում ես ջերյան եմ, թույլ տուր մըտիկ անեմ քեզ, պտույտ գամ քո շուրջը: Խաղը հագեցնելով խնդրական եղանակով, — «Թույլ քի սեյր անիմ», «Չուր գանձ համդամով»՝ ընկերով, «խաղ կանչինք հանգով» և այլն, — Սայաթ-Նովան յուրաքանչյուր տունը

ավարտում է տողով, որը հենց այդ թախանձանքի մի նոր տարբերակը հանդիսանալով, միաժամանակ ավելի խտացած է, առավել պոետական մարմնավորում ստացած.

Մո՛տ քաղչեն նազով, Տիգ զովիմ սազով,
յա՛ր, իլրիմազով...

Նազ, սազ, իլթիմազ... Բանաստեղծը իր դողալին անվանում է պատվական շինվածք, նմանեցնում Մեջլումի յար Լեզլոն, զուրբան լինում նրան, խնդրում լրցնել իր ձեռքի թասը և կարծես այդ տեսարանից առավել բորբոքվելով՝ արդեն ոչ թե խնդրում, այլ ուղղակի պերսում.

Թաք դու քաղչեն գաս՝ անիս մասնե մաս
Ֆու Սայար-Նովուն...

Սպանիր քո Սայաթ-Նովային,— այդ քո-ի մեջ էլ ցոլում է աղերսանք՝ քոնք չեմ, գիտեմ, բայց համարիք ինձ այդպիսին,— մասնեմաս, փարա-փարա արա նըրան, միայն թե, քաք, ոտղ գնես այզին, ուր վարդը բացվել է, իսկ թուփը թացվել երկնային խոնավությամբ։ Այդ քաքը աղերսանք չէ արդեն, այլ աղաշանք-պաղատանք, շնորհի անհույս սպասում։ «Քանի վուր շան իմ...» խաղում բերկրանքը շաղախված է հառաշանքով, գեղեցկության պաթոսը՝ տանջանքով, նվիրվածությունը սահմանագծում է մահվան պատրաստակամության հետ։ Սերը իրոք աշխարհի ամենամեծ պարզեն է, բայց և միաժամանակ տառապանքի աղբյուր։

Աղերսանքը, անպայման, Սայաթ-Նովայի սիրային խաղերի հիմնական մոտիվներից մեկն է։ Նա ասում է.

«աղալելուց զան չմնաց զանումըս...» (28 ա): Սակայն բանաստեղծի դժբախտ սերը, նրա զգացմունքների լիովիլունը, միահյուսված անողոք ճակատագրի հետ, միայն աղերսանքով չեն արտահայտվում, այլ ընդունում են նաև այլ ձևեր, պես-ալես երանդներ, դրսեռովում ամենատարրեր եղանակներով և պատկերներով:

«Խոսկիրըտ մալում իմ արի...» խաղում ևս, օրինակ, աղերսանք կա. «Համաշաւ իմ յարի ճամփին կանգնած իմ՝ տալիս իմ դովա», — ասում է Սայաթ-Նովան: Եվ այնուամենայնիվ այս խաղի խնտուացիան, նրա հոգերանական ելեջները և անցումները՝ համեմատությամբ նախորդ խաղի՝ այլ են: Այսուղեղ Սայաթ-Նովան պահանջ է զգում առավել ակտիվորեն հայտնարերելու իր վերաբերմունքը գեղի յարը, նկարագրելու, թե ինչպես է նա բառիս բուն խմաստով տակնուլիրա արել իր հոգին, թե ինչպես, չնայած դրան, իր սերը շարունակում է մնալ անհուն և աննահանջ: Գոզալը հուրյան բիրյան է արել Սայաթ-Նովային, այրել նրա լյարդն ու թոքը, սպանել նրա սիրուր: Բանաստեղծը գոզալի ոտքերի տակ է ձգում իր սիրո ամենամեծ առջավատան:

Աշխարհն աշխարով կըշտացավ, իմ սիրաբն
ֆիզանից սով ա...

Աշխարհը կըտացավ ինքն իրենով, բոլորովեց, հանգըստացավ, մնում է անդորրության մեջ, իսկ Սայաթ-Նովան շարունակում է մնալ կիսատ, թերի, վլոգովված, ծարավ: Բայց այս եղանակով ևս, աշխարհին ճակաղըրվելով էլ Սայաթ-Նովային չի հաջողվում ամրող-ջությամբ արտահայտել իր հույզը: Զգացմունքներն ավելի են շիկանում, բանաստեղծի հոգին հրդեհվում է,

նա պահանջ է զգում ինչոր սուր, այսող պատկերներով
արտահայտելու իր սերը՝ անկաշառ, հավիտենական:
Եվ նո տառմ է.

Յիս ժիգանից չի՞մ նիոանա, թեզուզ դու գու
խարու խալրտ...

Այսինքն՝ այլանդակվես էլ, միևնույն է, զու ևս իմ
սիրածը:

Սիրո՝ արտակարգ եղանակով հավաստիացումը
անխղելիորեն փարված է ու թերես զրա ակունքն է
Հանդիսանում տարակուսանքը, կասկածը, որն անընդ-
հատ կրծում է Սայաթ-Նովայի հոգին: Հենց գողալին տ-
սելով, թե իրեն նուրյան բիրյան արիր, Սայաթ-Նովան
ավելացնում է. «Աշա՞ր դուն էլ դարդ իս արի...»: Հարցի
ինտոնացիայից արդեն դդացվաւմ է, որ ոչ, գողալը բնակ
դարդ չի արել, որ նա անտարբեր է, որ նրա մտքերում
բանաստեղծը տեղ չի գրավում:

Կասկածանքն առավել լսկում է Հետելյալ տողի մեջ.
որ գանդատ է արդեն, բայց շատ մեղմ արտահայտված.
Իսկի չի՞ս զալի, չի՞ս ասում, «աջար ի՞նչ է,
բա՞նդա, նալրտ...»:

Նորից երկրայանք արտահայտող աջաբը... Մի
փոքր ձեափոխված միևնույն բառերը հնչում են արդեն-
խաղի վերջում որպես մորմոք.

Իսկի չի՞ս զալիս, չի՞ս ասում. «Խի՞ստ իս լալիս,
Սայար-Նովա».

Չըլի միտկըտ մոլըրվիլ է, սրտումքտ պրխառուր իս,
ա'խպեր...

Սայաթ-Նովայի խաղերում՝ յուրաքանչյուր տանը վերջին բառը նույնը լինելով՝ այնքան սերտ է կապված, այնպիս մերժած ամրողչի հետ, որ կարծես այդ ամրողը լուսավորող մի ճրադր լինի: Բավական է ճիշել «Թանի վոր ջան իմ...» խաղի իլրիմազը, «Ամեն սաղի մէշըն գոլած...» խաղի Տամանչան կամ «Աշխարլս» մէ փանջարա թ...» (53 հ) խաղի բեզօարիլ իմ կրկնումները, որպեսդի Համոզվենք դրա մէջ: Բանաստեղծի այդ կըրկնումները բնակլ միօրինակություն չեն ստեղծում, այլ, բնդհակառակն, ինչպես զիտել է Վ. Բրյուառվը, խթանում են որոնելու բազմազանություն:¹² Այդ բազմազանությունը երանգի մէջ պետք է որոնել ու գտնել, կոնտերստի մէջ, կրկնումի որիթմա-իմաստային շրջապատի մէջ:

«Խոսկիրը մալում իմ արի...» խաղի լույս տվող այդ կետը ախալերն է: «Ախալերը» սերտ կապված է մարտության, անարատության հետ: Խաղի հենց սկզբում այն զուգորդվում է «կաթնե ախալուրի», ապա փրփուրի հետ: Անարատությունն առավել շեշտվում է: Վերջում, սակայն, անցնելով խաղի սթանչացման, հոգետանց հավաստիացման ու սրտամաշ տարակուսանքի բովով, «ախալերը» միանգամայն այլափոխվում է ու ստանում նոր երանգ, նոր իմաստ ու Համապատասխան հնչունական պատկեր. միտքտ մոլորվել է, «սրտումը պըխտուր իս, ա'խալեր»... Ախալերը, որ ախալուր էր, հիմա, ավաղ, պիտուր է: Ակիզը անարատ ախալեր, վերջը պըխտուր սրտով ախալեր: Ամեն ինչ ավերվեց, բանաստեղծը կանգնած է փլատակների առաջ:

Այդպիսով, յարի գովերգումը, նրանով հիանալը վերջ ի վերջո ավարտվեց Սայաթ-Նովայի սիրո Համար Ճակատագրական ողբերգությամբ: Մերը աննկարա-

գրելի երջանկություն է՝ փաթաթված ապերջանկության հետ, շլացուցիչ բախտ, որի վաղը ապարախտությունն է:

Սքանչացման և տառապանքի կոնտրաստն ու նըրանց միահյուսվածությունն առավել սուր է արտահայտված այն հրաշալի խաղի մեջ (12 լ), որն ունի հետեւյալ սկզբը.

Աստղերու պես յիշընքի նիրաշ իս դուն.

Կարմիր վարք իս, դաշտի ալ-ղումաշ իս դուն.

Գարնան սիրուն ծաղիկներեն բաշ իս դուն.

Սանրուր իս դուն, բամանչա իս, տաշ իս դուն.

Հուր-հուղեն, ծովի ջեյրան, ռազ իս դուն...

Ինչպես շատ դեպքերում, այնպիս էլ այս անգամ Սայաթ-Նովան կարծես խեղդվում է այն անհաշիվ բառի, էպիտետների, համեմատությունների տարափից, սրոնցով նա շտապում է բացահայտել իր սիրածի հմայքը, վախճանալով, կարծես, թի նրանցից որևէ մեկը կարող է մոռացվել, որի հետեւանքով և գեղեցկության պատկերը կարող է թերի մնալ:

Արդարու պես սար ու քոլիր կու սիրիս,

Ամպի նրման ծով ու գոլիր կու սիրիս,

Ջեյրանի պես ազատ չոլիր կու սիրիս.

Հուրա-շուրա զարբար շորիր կու սիրիս,

Քու տեսնողի համար «ա՛խ ու վա՛շ» իս դուն...

Եթե նախորդ տողերում աշխարհի բոլոր խորշերը, գեղեցկությամբ և խմաստությամբ լի բոլոր անկյունները կենտրոնացվում են գողալի էության մեջ, ապա հիմա գողալը, ընդհակառակը, սփռվում է ամբողջ աշ-

խարհով մեկ, սավառնում կարծես սար ու թփի, ծով ու
լճի, ազատ և ընդարձակ դաշտերի վրայով և իր սերը
թափում բոլորի վրա:

Վերջում Սայաթ-Նովան ասում է.

Յարս Հնդու Շահի իխտիար ունե.

Ամեն նույնը զբլովս բերող նար ունե.

Բրոլի սինով անզին ակ ու քար ունե.

Սըրով, նիզով դուր պահող չար ունե...

Ո՞վ իս, Սայաթ-Նովա, մե չարքաշ իս դուն...

Գողալը, որ կարողանում է իր մեջ հավաքել ամբողջ իրականությունը և իր գեղեցկության բարձունքներից տիրել համակ աշխարհին, պարզ է, որ անհուն ուժի տեսր պիտի լինի: Այս աշխարհասասան գեղեցկության դիմաց ո՞վ է կանգնած: «Ո՞վ իս դուն», — հարց է տալիս ինքն իրեն Սայաթ-Նովան և, ինչպես տեսանը, պատասխանում: «...մե շարքաշ իս դուն»:

Բազմաթիվ անգամ Սայաթ-Նովան իրեն չըպատար է անվանել, այժմ նա արժանացավ մի նոր, չարքաշ տիտղոսի: Վեհության ու խեղճության, հրամայողի և պաղատողի հակառակությունը սարսուի պիս անցնում է ոչ միայն այս տողով, այլև ամբողջ խաղով:

Այս տողը, այժմ, տվյալ համազրմամբ, կարծես անդունդից է լսվում: Սայաթ-Նովայի հիացմունքը նորից ավարտվեց հեկեկանքով, վճիտ աղբյուղը նորից պըղտորովք: Բանաստեղծի կոտրված սրտի համար փարվանան կամ սիրած սիրավեպերի հերոսներն իրենց զմայլված հոգով ու ողբերգական վախճանով սոսկ պատկերներ չեն, այլ դաժան իրականություն: Կարծես

սրանց շարունակությունը լինի նա: Իզուր չէ ասել
Ավ. Խաչակրանը, որ Սայաթ-Նովայի աշքերը նա պատ-
կերացնում է մերթ «Հավերժական կապույտ, ծովերի
նման», մերթ «ու ու խորունկ վշտի պես»¹³:

3

Սայաթ-Նովայի սերը կյանքում ճանապարհ չի
գտնում: Իրականությունը, անձուկ լինելով, ասպարել
չի տալիս նրա զգացմունքների, ծալալմանը, անհաղ-
թահարելի խոշընդուներ է հարուցում, կասեցնում նրա
թափը, խափանում թոփը, ճեղքում հոգին: Տառա-
պանքն ավելի սուր բնույթ է ընդունում, կյանքը սկսում
է նահանջել Սայաթ-Նովայից:

«Մե խոսկ ունիմ իլթիմազով...» խաղի մեջ (31 հ.)
Սայաթ-Նովան նորից ու նորից պատմում է իր մեծ
սիրո ու մեծ ցավի մասին: Էշխիցդ շունուն եմ գարձել
ման եմ զալիս վիրավոր,— ասում է նա: Մթագնել է
քանաստեղծի գիտակցությունը: Նա կորցրել է կողմնո-
րոշումը, հիշողությունը, ճիգ է գործադրում, բայց չի
կարողանում մտարերել, թե ինչ է կատարել իր ճիտ
նախորդ ժամկեն.

Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի զուգե վուր
դաստ անիմ...

Նա վերջնականապես մոլորվել է.

Ցիս մե փուէքը նավի նըման, քու էշխըն է՝ ծով,
աշկի լուս...

Կանքի այս նահանջն առավել հստակ կարելի է
զիտել «Ինձ ու իմ սիրեկան յարին...» խաղի մեջ
(57 հ.), որուղ ասված է.

Այս ժաշելեն սըրտիս մեշըն արունն

մերած զիտենամ-

Գիշեր-ցերեկ յարի խարռու չիգարը

էրած զիտենամ.

Սշկըս բաց, քերանըս ցամաճ, լիզուս

հիդժերած զիտենամ...

Հետափա տողերում կարդում ենք, որ աշքերի լույ-
սը դնացել է, սիրաը թուլացել, մարմինը հալվել, ար-
նաքամ է եղել: «Էրած խորված ման իմ զալի», — ասում
է Սայաթ-Նովան:

Հայտնի է, որ իր հույզն արտահայտելիս Սայաթ-
Նովան, ապրումների լիությունից, հաճախ դեմ էր առնում
բարի պակասության: Ստեղծագործական կամքի գերա-
գույն լաբումով ու զգացմունքների խենթ, ելք փնտրող
դեգերումների ազգեցությամբ նա կարողանում էր նո-
րից լցնել այդ բացը: Այժմ նա խոստովանում է, որ իր
տառապանքների մասին «լիզվով չիմ կանացի ասի, թե-
զուզ խոսկըս փար ունենամ...»:

Սայաթ-Նովան ստիպված վար է դնում իր զենքերը՝
լեզուն անզոր է, հոգին կաշկանդված, ուշքն ու միտքը-
կապված: Եվ ինչպես մի այլ տեղում բարեկամներն
ախ ասելով, այստեղ էլ նրանք վա՞յ քու դարին՝ վի-
ճակին՝ ասելով են զիմավորում բանաստեղծին: Ծան-
րագույն այս կացությունը իր աստիճանական խտաց-
ման արտահայտությունն է գտնում խաղի յուրաքան-
չուր քառյակի վերջին տողի վերջին խոսքում.

...լիզուս հիդժերած զիտենամ.

...իմ օրը կերած զիտենամ.

...ինձ ջրի տարած գիտենամ.
...յարես յիդ արած գիտենամ:

Այս ողբերգական գիտենամ կրկնումներով Սայաթ-Նովան բարձրածայն, ի լուր ամբողջ աշխարհի հայտ-նում է իր ցավը: Դրանք իրենց տրամաբանական ա-վարտն են գտնում խաղի վերջին, ամփոփող տողում.

Ամբորս էրազի պես զրնաց՝ ծառը
շրխերած գիտենամ...

Անհետ, անպառուղ են անցել բանաստեղծի օրերը:
Բոլոր ուղղություններով էլ կյանքը նահանջում է նը-
րանից: Այն լեզուն, որ հրգեհվում էր, այժմ լոել է, այն
արյունը, որ բոցկլառում էր, այժմ մակարդվել է, չի-
գյարը այրվել, բերանը ցածաքել, աշքը ջրակալել:

Սայաթ-Նովայի նման խոսքերը, իհարկե, բառա-
ցիորեն չպետք է ընդունել: Սրանք, վերջին հաշվով,
նրա հոգեկան գժվարին դրության պատկերավոր ընդ-
հանրացումն են, հանրագումարը: Բայց, մյուս կողմից,
թվում է, որ այս խոսքերի մեջ ինչ-որ իրական,
կրետ մոմենտ է ցոլում: Նրա բարեկամների բացական-
չության մեջ՝ վայ քո վիճակին, Սայաթ-Նովա, մի՞թե
քեզ միշտ արյունակալած աշքերով պիտի տեսնենք, —ոչ
միայն հոգեկանն է ակնարկվում, այլ, կարծես, նաև ֆի-
զիկականը: Հնարավոր է, որ սոսկ էսթետիկական շա-
հագրգովածությունը չի թելազրել բանաստեղծին «ին-
գուր աշկըս չէ ցածաքում...» (33 հ) խաղում ասելու
«էշխեմեն հիվանդ պառկեցա...»: Առավել ոհալ է թը-
զում հետեւյալ տողը. «էշխեմեն հիվանդացիլ իմ,
պառկած իմ գրժար հալի», որ նույնությամբ հանգի-
պում ենք թե՛ «Դաստամազըտ սիմ ու շարքաթ...»

(22 հ) և թե՛ «Մեջլումի պես՝ կորավ յարըս...» (27 հ) խաղերում:

Զի բացառվում ու կարող է պատահել, որ սիրո զգացմունքը Սայաթ-Նովան այնպիսի սրությամբ է ապրել, որ այն ունեցել է նաև իր ֆիզիկական հետեւանքը, որը և — թեկուղ խուզ կերպով — անդրադարձել է նրա խաղերում:

Կարո՞ղ էր պատահել, որ Սայաթ-Նովայի կյանքն այնպիսի ընթացք ընդուներ, որ այն այլ գնահատականի արժանանար: Չէ՞ որ բանաստեղծի բարեկամները, կարեկցելով նրան, միաժամանակ ասում են, կարծես խորհուրդ են տալիս. «Ինչո՞վ շելավ, ըստաստ էկար մելավ յարին, Սայաթ-Նովա»: Ուրեմն, լավ յարի հանդիպելը, նոր կյանքի հնարավորությունն են թողնում նրա համար:

Խաղն իր ամրողությամբ բացասական պատասխան է տալիս այդ հարցմունքին: Ո՛չ, Սայաթ-Նովայի լեզուն կարկամած կմնա, հոգին՝ հրկիզված: Բանաստեղծն այդ խնդիրը լուծել է խաղի հենց սկզբում.

Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի
քերած զիտենաք...

Սայաթ-Նովան իր կյանքը, իր հոգին այնքան է միահյուսված երեակայում իր յարի հետ, — անկախ յարի վերաբերմունքից, — որ նրան թվում է, իբր, իրենց մայրերը միաժամանակ են ծնել նրանց: Այդպես էլ միահյուսված պիտի գնա: Այլ ուղի Սայաթ-Նովան չեղատկերացնում: Նա միայն մի յար է ունեցել, մի սիրեկան յար ու իր հոգով մինչև վերջն էլ նրա հետ ֆլինելու: Թվում է, այդպես պետք է մեկնաբանել մեջբերված տողը:

Նա կարող է իր սիրած Հեքիաթայլին Հերոսների պես անէանալ, բայց սիրո զգացմունքը կմնա ու կպահպահնի իր աննկարագրելի ուժը։ Սայաթ-Նովան և Ավետիք Իսահակյանը՝ Հակառակ ծայրերից՝ Հանդիպեցին իրար։

Ինչպես փարվանայի բյուրավոր խմբերը գալիս են ու գալիս լույսի վրա և Հրկիվվում, նորից գալիս և նորից Հրկիվվում ու այսպես անվերջ, որով և Հաստատվում է սիրո՞ մահվանից առավել ուժեղ լինելը, այնպես էլ կյանքը կաթիլ առ կաթիլ կարող է թողնել Սայաթ-Նովային, բայց ոերը կմնա ու կմնա, չի նահանջի, որով Հետեւ նա անվերջ է, որովհետեւ նա գալիս է ազալից (17 ա), Հավերժից, անմտհությունից։

Նախորդ խաղում ես Սայաթ-Նովան, թեև ծայրահեղորին Հուսահատված, այնուամենայնիվ ասում չ, որ նա այն մահին մահ չի ասի «Հենչար ըլի՝ զուն վըրես լաս մազրտ շաղ տալով, աշկի լուս»։ Այդպիսով, մահը դադարում է մահ լինելոց ու գառնում երջանկություն, երբ այն սիրածի ուղութին է։ «Աշկի լուսը», որ լույս էր տալիս՝ քայլ առ քայլ Հետեւելով բանաստեղծության ընթացքին, այսուեղ, վերջին տողում էլ, Հակագրվելով մահվան խավարին, շարունակում է լույս տալ, փողփողակ։ Կյանքը Հեռանում է Սայաթ-Նովայից, բայց սիրո շահը չի մարում, նրան մնող Հյութը չի Հատնում։ Ողբերգությունը խորանում է, զառնում բանաստեղծի Համբառնական ընկերակիցը, բայց նա մնում է Հոգով անվթար, սրտի խորքում յարի նվիրական պատկերը։

III

ԴՐԱԿԱՆԱԿԱՐԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԵՎ ՀՐԱԺԱՐՈՒՄ ԻՐԵՆԻՑ

1

Սայաթ-Նովան ոչ միայն ապրում էր, սիրում և տառապում, այլև արծվի իր հայացքով դիտում շորս կողմը, խորհում, հետեւթյուններ անում։ Նա մեծ քընարկերգու էր և որպես այդպիսին նաև մեծ մտածող։ Նրա խաղերի մի զգալի մասը մտորում է, մտածմունք կցանքի մասին, առհասարակ աշխարհի մասին։ Դրանք «խոհական» չեն բառիս տրագիֆիոն խմաստով, ինչպես անվանվում են միջնադարյան տաղերգունների որոշ տեսակի բանաստեղծությունները։ Դրանք ընդհանուր ու թիրես վերացական խոհեր չեն աշխարհի ունայնության, կյանքի անցողիկության և այլնի մասին, որոնցից Սայաթ-Նովան էլ ունի։ Դրանք կոնկրետ փորձից, անմիջական իրականությունից ելնող մեծ ընդհանրացումներ են։ Ծնդհանրացումներ են, օրինակ, Սայաթ-Նովայի խաղերը, որոնց մեջ նա խոսում է արվեստի ազնվայնով նշանակության, աշուղի վեհ կոչման և այլ խնդիրների մասին։ Այդ խաղերը, վերածված երգի, Սայաթ-Նովայի պուխ-գործոցներիցն են թե՛ որպես բանաստեղ-

ծական արվեստի բարձր արտահայտություններ և թէ՝ որպես երաժշտություն։ Նման գլուխ-գործոցներից է «Աշխարըս՝ մէ փանջարա է...» (53 հ.) անմեռ խաղը (գրված 1759 թվականին)։ Բանաստեղծի ընդհանրացնող միտքն այստեղ հասնում է բարձրակետին։

Սիրելով և տառապելով ու միաժամանակ առավել ուշադրությամբ դիտելով աշխարհը, Սայաթ-Նովան տեսնում է, որ իր և իր նմանների ցավերի սկիզբը, նրանց ակունքներն իր շրջապատումն են գտնվում, գալիս են մարդկանցից, այն օրենքներից, որոնցով նրանք գեհեկարվում են, այն կարգերից, որոնք ուահմանվել են կյանքում։ Դաուը տիրությունը պատում է բանաստեղծին։ Ու եթե սիրո մորմոքը արցունք է քամում նրա աշքերից, ապա կյանքում տիրով անիրավությունից առաջացած զժգոհությունը կրծում է նրա սիրտը։ Կոնֆլիկտը իրականության հետ ծավալվում է և խորանում։ «Փանջարայի» վերջում Սայաթ-Նովան ասում է.

Բըլբովի պես էնդուր գու լամ՝ վարիս խարճն
շատացիլ է.

Զի՞ն բողնում վախտին բացվելու, — բաղերումնեն
բեզարիլ իմ...

Սա նշանակում է, որ հանգամանքները, կյանքում տիրով օրենքները, գոյություն ունեցող հարաբերությունները մարդկանց հնարավորություն չեն աալիս բացահայտվելու, իրենց իզձերը կատարելու, մուրագին հասնելու։ Զգացմունքների փթթման համար ասպարեզ չկա, նիմիրականը մնում է խոր թաղված։ Մարդ վարդի պես պիտի բացվի, բայց խոչընդոտներն այնքան են շատ, որ այդ տեղի շի ունենում՝ կամ կոկոնն են կտրում։

կամ թառամած են քեզ տեսնում: Բանաստեղծը հսկնել
է անժամանակ քաղվելոց՝ յաղերումնեն:

Իհարկե, աստծու համար հեշտ է մարդուն աշխարհ
բերելն ու տանելը: Դա ինքնարերաբար կատարվող մի
դործ է: Բայց՝

Ո՞վ կոսի թե յիս կու ապրիմ առուածեմեն

ինչրու մուռըն...

Առավոտվա փոխարինումն էլ երեկոյով բնական
երկույթ է: Բայց կարո՞ղ ես ասել, որ աշխարհի բացման
հետ միասին իմ հոգին իւլ բացվում է, ապրում, որ արևի
ծագման ու մայր մտնելու միջոցում ես կարողանում եմ
նորից ունորից հիանալ աշխարհով, կամ՝ նորանոր գծեր,
առավել գեղեցիկ, տեսնելով նրա մեջ՝ միաժամանակ
ամեն մի բոպե չեմ խոցվում ու նսեմացվում: Սայաթ-
Նովայի հարցի մեջ արդեն դրված է ծխտական պա-
տասխան: Նրա ասածն այն է, որ մարդ լիարյուն չի ապ-
րում և չի էլ կարող ապրել, որովհետև ինչպես շատացել
է վարդն ուտող միջատը, այնպես էլ շատացել է խա-
խի սուտը, զուրբի համար ձանապարհը կտրվել է: Շտ-
տացել են իր, Սայաթ-Նովայի դարդերը, կյանքի դժվա-
րությունները՝ դարերը, այնքան են բազմացել, որ բա-
նաստեղծն այլևս ոչ մի հույս չունի ապագայի նկատ-
մամբ, և ավ բան չի տեսնում այնտեղ.

Դոստիքը դուշման ին դառի — յաղերումնեն

բեզարիլ իմ...

Մարդոց էլ բանաստեղծը սպասելիք չունի. թըր-
թուրն աբրեշում չի տա, ոչ էլ ու ճանձը՝ մեղքը, հարամը
հալալ չի դառնա: Հարկավոր է ստուգել մարդուն, կողը
քեզ փորձաքարին, այն ժամանակ կորոշվի նրա լավին ու

վատը, որովհետև արտաքուստ դու կարող ես բարեհամբույր լինել, խալիս թլալ, խկ ներքուստ դալլ գուրս դալ. «Գուղիմ սիրութ շանց տաս, տեսքըտ ամեն մարթ հա՛ կու տեսնե» (10 ա), — ասում է Սայաթ-Նովան:

Աշխարհս այնքան է վատացել, որ կենսուրախ բանաստեղծը երկու տողում երկու անգամ միևնույն բառերով ունայնության մասին է խոսում՝ «աշխարըս միդ մընալու չե»¹⁴; Մեջլիս սիրող աշուղն այլիս չի կարողանում տանել «խալիսի գափը», կատակը, համբերությունը հատել է, նրան բարկացնում է անգամ մարդկանց ուրախանալու պատրաստակամությունը. «Հում կաթնակիր-Աթա՛մի զաթ, նա՛լաթ ըլի էտ քու բառին...»:

Սայաթ-Նովայի հիմասթափությունը կյանքից այնքան է խոր, նրա հոգնածությունը այնքան համատարած, որ ամբողջ խաղի գլխավոր մոտիվը դառնում է հոշակալոր քեզարիլ իմ խոսքը: Բանաստեղծը բեզարել է քաղերումնեն, թշնամիներից՝ յաղերումնեն, բեզարել է մեծատուններից՝ աղերումնեն, բեզարել է անգամ՝ գալիքօրից.

Երեք լավ էր կանց վուր էսօր, — վաղերումնեն
քեզարիլ իմ...

Կյանքը անընդհատ դեպի վատն է դնում, շարշարանքն օրավուր խտանում, տառապանքը խորանում, — «օրը մեկ է, ցավը՝ հաղար» (10 ա) ու Սայաթ-Նովան այնպիսի մի հայտարարություն է անում, որից կարելի է միայն փշաքաղլել.

Մարք համաշա մեկ չի ըլի, — խաղերումնեն
քեզարիլ իմ...

Արքա՞ն աշխարհից վշտացած պիտի լիներ բանաստեղծը, որպեսզի հայտարարեր, թե ո՞վ է ասել, որ մարդ միշտ միևնույնը պիտի լինի. ահա տեսեք, երեկ լի էի ավառնով, այսօր դատարկ մի անոթ եմ ես, ոչնչություն։ Որքա՞ն տրորված պիտի լիներ կյանքից, որպեսզի ինքը փակեր իր բերանը, լոեցներ իր երզը, կտրեր իր խաղի թելը։ Մեծ ողբերգություն նա պիտի ապրեր, հրաժարվելով ինքն իրենից, իր էությունից, իր հանճարից՝ խաղերումնեն։

Խաղի սկզբի տողերում, որ, ամփոփում լինելով, թվում է, վերջում պիտի լինեին¹⁵, Սայաթ-Նովան առում է.

Աշխարհս՝ մե փանջարա է,— բաղերումնեն
բեզարիլ իմ,
Մըտիկ արվողըն կու խուցվի,— դաղերումնեն
բեզարիլ իմ...

Աշխարհը, որ ներշնչման աղբյուր էր, այժմ ոչինչ չի ասում Սայաթ-Նովային, համբ է, անխոս։ Նա կըծկըվել, փոքրացել, փանջարա է դարձել։ Նա բանտ չ' նեղ, սրտաճմիիկ պատուհաններով, կաղեմատ՝ հեռանկար փակող բաղերով։ Ահա թե ի՞նչ եղբահանգման հասցրեց Սայաթ-Նովային կյանքի անարդարացի տնօրինումը։

Սայաթ-Նովայի հոգնածությունը մարդկանցից և աշխարհից, անձնական ապրումների խոր կնիք կրելով, բատ էության, հայ ժողովրդի, ոչ ֆեոդալական շրջանի շահագործման խորացման պայմաններում ապրող հասարակ մարդու վշտի, նրա ծանր ճակատագրի արտահայտությունն է։ Այդ վիշտը ծորալով փոքրիկ, թերեւ անտեսանելի առվակներով, ծովացել է բանաստեղծի հոգում ու վերջիվերջո վերածվել շքնաղ այս երգին։

Սայաթ-Նովան ունի մի շարք խաղեր, որոնք, զըս-
ված գերազանցորեն 1758—1759 թվականներին, իրենց
մոտիւներով հարազատ են «Աշխարհս՝ մե փանջարա-
է...» բանաստեղծությանը ու կարծես նրա ճյուղավո-
րումներն են Հանդիսանում։ Դրանցից մեկը (21 վ) հե-
տեյալ տողերով է սկսվում։

Երկու զիղի միշտիդումն սար է, կոսին, ճշմարիտ է.

Յաղըտ լիմը ծաղկած ծաղիկ-ծառ է, կոսին,
ճշմարիտ է.

Յաղիտ նամփին բլբուներու շար է, կոսին,
ճշմարիտ է.

Շատ էրզրնիր-ծովեր տեսա, վուրը կոսին,
ճշմարիտ է.

Սիրուն է Զին բաժավուրի ժուրը, կոսին,
ճշմարիտ է...

Այս՝, Ճշմարիտ է, որ չին թագավորի քույրը գե-
ղեցիկ է, Ճշմարիտ է, որ այսին լիքն է ծաղկած ծառե-
րով, որ նրա Հանապարհին բլբուներ են շարված։ Այս
ամենը անառարկելի Ճշմարտություններ են։ Բայց ահա՝

Զեռ մեկնեցի, ծակծըկեցիր մոշի փշուտ ժոլի նըման։

Մատներեմես արուն կարից, կարմրագուն լալի
նըման...

Աստված վըկա յիս նընգիլ իմ հուրը, կոսին,
ճշմարիտ է...

Հիմա էլ բանաստեղծն ասում է՝ ճշմարիտ է, բայց
արդեն հեզնանքով։ Իմ ցավին ավելացավ ևս քսան
ցավ — մարդիկ այդ էլ ճշմարտություն են համարում։ Ինձ
գցեցին Հորը, ծածկեցին ջաղացքարով, հնար չկա դուրս
դալ այնտեղից — ճշմարիտ է, ասացին, ոչինչ չի կարելի
անել։ Սայաթ-Նովան տարակուսած կանգ է առել։ Սուտն
այնքան է շատացել, որ դուրքը այլևս չի գնում, կորցրել
է իր կշխը։ Բանաստեղծը չդիտե ինչ անել.

Ճամփիս կորավ, ափ դուս չեկա, ծովի ծածկած
խուր տիլի պես...

Մինչի կեսը փոսի մեջն իմ, միշեն կոտրած
հին ժիլի պես...

Կան մարդիկ, ասում է Սայաթ-Նովան մի այլ տեղ
(22 վ), որ փշես վեր կընկնին, բայց «Ղոշաղ մարթու
ուժն ու հաղը կու փանե...»։ Մարդ էլ կա, որ դրականում
անգամ քոռ, ժանգոտած դանակ շունենալով՝ «Խորասա-
նու սուր խանջաղը կու փանէ...»։ Կա և այնպիսին, որ
դաշտում թրջված հալիք պես լինելով՝ «Խրենց տանը
Ռոստոմ-Զալին կու փանէ...»։ Սրանք բոլորը ճշմարտու-
թյան դեմ են գնում, սրանք բոլորը երկրպագում են
ստին, ու աշխարհը, ավաղ, այնպես է դասավորված,
որ այդ սուտը ճշմարտի տեղ է ընդունվում։ Աղվեսները
առյուծի տեղ են գնում, վախկոտները՝ ավսանի՝ օձերին
սանձահարողների տեղ, այլանդակն իրեն նասան՝ լըք-
նաղ է անվանում, տժարդին՝ խսան, մարդ։

Ամենից սարսափելին ու ծիծաղելին այն է, «վուր
աղվեսն «ասլան-բասան իմ», կոսե» (37 ա)։ Սուտը
պատել է կյանքը, լցրել նրա բոլոր անցքերը։ Չեն տար-
քերում Սայաթ-Նովալի երգը պատահական մի մարդու

դրածից (41 ա): Կյանքն այնպես է դասավորվել, որ իմաստուն, աղնիվ, առյուծի համարձակություն ունեցող մարդիկ, այնուամենայնիվ, վշտացած են, կոտրված սրտով են ման գալիս: Գյաղաներն են, որ տիրացել են աշխարհի բոլոր բարիքներին: Աշխարհս շատ է նիդացիլ, շարունակում է գանդատվել Սայաթ-Նովան, մարդիկ թշնամացել են, մոտիկները յադ են դարձել իրար.

Էլ նշմարիտ, արքար իման չը մնաց (58 ա)...

Եշարկե, Հրեշտակների կամքը կատարելը լավ մարդու նշան է, բայց զրանք էլ, այդ իմաստունները, ոչինչ շտարան այս աշխարհից, չտեսան նրա հոտն ու համը: Զարխսի-Փալազըն շուռ է եկել, ունեցվածքը խոռվել է մեղնից, չունեորին մարդու տեղ չեն գնում. «Ում հարին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թէ էս ո՞վ ա ...» (44 հ): Ուր գնում ես հանդիպում ես անանցանելի պատի. աշխարհումս ցավ շատ կա, բայց դարման անող չկա: Վերքը միծ է, վիրակապը փոքր: Ո՞ւմ դիմես: Լավ տեսնողը, շրջապատը զգոն ըմբռնողը խարխափում է այժմ, կորցրել է իր ուղենիշը: Սայաթ-Նովան արցունք է թափում, հուսահատված է, շարի անխուսափելիության, ունայնության զգացմունքը ուտաել է նրան:

Բանաստեղծը այնքան է շփոթվել, որ գերանը կորցնելով, շցուղի հետեւ է ընկել, նետը քարին տալով ու կոտրելով՝ ծայրի համար է մտածում: Սայաթ-Նովան կորցրել է ապրելու, վարդեցողության շափանիշ-ները, խարխափում է, կարևորը չի տարերում ոչ կարե-վորից, նրա ոտքի տակի հողը, կարծես, սկսում է երե-րալ.

Բեզարիլ Լ նոմիս մարմնից, հա՛ տաճշվում է, վունց զանրից (50 ա) ..

Սայաթ-Նովայի Հոգնածությունը, Հիասթափությունը, իրականության նրա հոռի գնահատականը շատ հետաքրքիր կերպով նորից բացահայտվում են «էշխի ծովի միշեն հանած...» (1 ա) խաղում:

Հովհ. Թումանյանի «Իմ երգը» բանաստեղծությունը, որ արտահայտում է պոետի աշխարհըմբոնման ուզն ու ծուծը, իր սովոր շատ մոտ է Սայաթ-Նովայի խաղին: Ճիշտ է, երկու այդ լանաստեղծների ապրած դարաշրջանը և պատմական փորձը տարրեր են, բայց քանի որ շատ կողմերով են նրանք մերձենում իրար, այսու զուգահեռ անցկացնելը նրանց որոշ գործերի միշեն միանգամայն արդարացվում է:

Սայաթ-Նովայի խաղը հետեւալ երկտողով է ըստ կըսվում:

Էշխի ծովի միշեն հանած լալ ու գոհար է բիորս.

Սիստակ, կանանչ, խաս ու դումաշ, զար դալամբար է բիորս...

«Իմ երգի» սկիզբը.

Գանձեր ունեմ անտա՞կ, անձե՞ր...

Այս տողերն անգամ բավական են ակնարկելու երկու բանաստեղծությունների ներքին աղերսը: Խոսելով իր անտակ և անծայր գանձերի մասին, Թումանյանը, իհարկե, նկատի ունի Հոգեռը գանձերը: Նույնը կարելի է ասել Սայաթ-Նովայի վերաբերյալ: Այդ է վկայում Սայաթ-Նովայի խոսքը, որ լալ ու գոհարի, խաս ու զումաշի իր բեռը նա հանել է էշխի, այսինքն՝ սիրո, ապրումների ծովից:

Այդ է վկայում նաև «Գուղիմ» ուժբրըս Հենց անց

կացնիմ...» խաղը (15 հ): Այստեղ Սայաթ-Նովան ասում է, թե անհունորեն հարուստ է: Նա բեռներով ատլան ունի, ոսխի մագաղաթի պես զարդարամքար, նա այնքան հարստություն ունի, որ կարող է գնել ամբողջ Չինումաշխինը: Միամիտները կարծում են, թե Սայաթ-Նովան զանգին է: Այո՛, Սայաթ-Նովան, իսկապես զանգին է, հարուստ է, անշափ հարուստ: Բայց նրա հարստությունը ոչ թանկարժեք քարերն են ու կերպասները և ոչ էլ հոտավետ բույսերն ու համեմունքները: Նրա հարստությունը երգն է՝

Զին զիդի թե ուշկ ու միտկըս հազար մե
քաբար հանգին ա...

Սայաթ-Նովան, զարդացնելով նախորդ խաղի իր ասածը, շարունակում է, թե իր բուր հիլ ու մեխակ է, դոշար ու շարքաթ, նուշ ու նարաթ, թե նրա հոտը աշխարհ է բռնել, թե՝

Ինչեան ուստադ կա աշխարում, բուդ
հավաբվին բամաշի,

Հընդբատանից դալամբար զա, մար կու մընա,
իմ նախշին:

Մար կու մընան իմ մարշանին, իմ ակներուն
անհաշիվ:

Իր հոգերը գանձերի մեծությունն ու փայլը առավել տպավորիչ գարձնելու համար օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, բոլոր թանկարժեք քարերը, արեվելյան ամեն տեսակի կերպասները, Սայաթ-Նովան ասածն ավարտում է հետեւյալ տողով.

Բիորս էնքան մինձացիլ է՝ փիլը տանիլ
չի կանա...

Այսպիսով, Սայաթ-Նովայի հոգեոր բեռը անընդ-Հատ մեծանալով ու ծանրանալով հասնում է անսահ-ման չափերի, որը նա արտահայտում է այն ժամանա-կի արենելլան մարդու համար հնարավոր հիպերբոլայով։ Կարծես արձականքելով Սայաթ-Նովային, Թումանյանը շարունակում է.

Ես հարուստ եմ, զա՞ն ես հարուստ,
Ծով բարուրյուն, շընորհի ու սեր,
Ճոխ պարզե եմ առել վերուստ...

Պարզ է, որ թե՛ Սայաթ-Նովան և թե՛ Թումանյանը հոգեղիս լեփի-լեցուն են զգում իրենց, անշափելիորեն հարուստ։ Ու երկուսի մոտ էլ ներքին այդ հարստության պիտակցությունը ուղեկցվում է անհուն երշանկության ապրումով։ Մավալելով իր խաղի բովանդակությունը, Սայաթ-Նովան ասում է.

Սելավ էլ զա, սրտիս քուրեն էլի մարիլ
չի կանա...

Բայց դա լրիվ համապատասխանում է Թումանյանի քանաստեղծության հետեւալ տողերին.

Սնիուն հանքը իմ գանձերի
Սիրտը է առատ, լեն ու ազատ՝
Խճչան էլ որ բաշխեմ ձրի —
Սերն անվերջ է, բարին անհատ...

Եթե մեկի սրտի բոցը չի կարող մարել ոչ մի սե-
շավ, ապա մյուսը որքան էլ շռայի իր դանձերը՝ չեն
հատնի, որովհետեւ անսպառ են նրա մեջ ամբարված

սերն ու բարին: Երկու մեծ բանաստեղծների հոգու լիությունը նորից ու ավելի ուժեղ շեշտվում է, նորից ու ավելի ուժեղ զգացվում է նրանց երջանկությունը. նրանք երջանիկ են մարդկանցով, ամբողջ աշխարհով, իրենց հանձարով:

Սայաթ-Նովան ասում է.

Էյ, աղանիր, վախում իմ յիս բալանշեմն
ու գողեն
Բիորս մե մեկ բաց իմ անում, շանց իմ
տալիս էկողին,

Իմ գըլուխըս մատաղ ըլի առնողին ու
շառնողին...

Թումանյանն ասում է.

Երկյուղ չունեմ, ամ չունեմ ես
Գողից, շարից, շար փորձանքից,
Սշխարհինվ մին՝ ահա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից...

Թվում է, թե մեկը վախենում է գողից, մյուսը՝ ոչ:
Սակայն, ըստ էության, նրանց ասածները նույնն են:
Որովհետև թումանյանի խոսքը, թե իր գանձերն աշխարհով մեկ շաղ է տալիս, դա նույնն է, ինչ Սայաթ-Նովայի խոսքը, թե իր բեռք բաց է անում, ցույց է տալիս ամենքին, թե նա մատաղ է լինում «առնողին» էլ, «շառնողին» էլ, այսինքն՝ բոլոր մարդկանց անխտիր: Երկուսն էլ գիտակցում են իրենց անհույս հարստությունը, երկուսն էլ պատրաստ են մինչև վերջին կաթիլը հանձնել այն մարդկանց:

Սակայն, Սայաթ-Նովայի խաղում կան մոմենտներ, որոնք բացակայում են թումանյանի մոտ: Ակսվում

է տարամիտում երկու մեծ մարդկանց միջև, որը ելնում
է նրանց պատմական տարբեր ճակատագրից: Թուման-
յանը հեռանկար իր տեսնում, նոր կյանքի արեածագ,
Սայաթ-Նովայի համար հորիզոնը շարունակում էր ամ-
պամած մնալ:

Թումանյանի բանաստեղծությունն այսպես է ամ-
փոփոլում.

Ես հարուստ եմ, ես բախտավոր
Եմ ծընընդյան պայծառ օրեն,
Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տըլածն եմ տալիս իրեն...

Ահա Սայաթ-Նովայի խաղի վերջին տունը.

Ժեռ ժարիրքն ալմաս դառնան, աշկըս վըրեն
Չը մընա.

Թե մարդիմ իմ տիսըն չը գան՝ ուրիշի մոդ
Հիմ գընա.

Հետի էշխի կրտակ ունիմ, ինձ մոդենալ
Հին կանա.

Սայար-Նովուն չը հավատաք, չուն իսկըն
Էս մեկըն ա,
Չըլի թէ արեուն դընիք, կու հալվե՝ ձյուն է
Բիորս...

Թումանյանը նորից հաստատում է բա-
նաստեղծության նախորդ տողերում իր ասածը, թե ինքը
Հարուստ է, բախտավոր, երջանիկ, և այդ ոչ միայն
հիմա, այլ ի սկզբանիք, իր ծննդյան օրից, որը նա նույն-

պես երջանիկ է համարում, պայծառ: Միաժամանակ նա հաստատում է նաև իր միաձույլ լինելը աշխարհի հետ, այն ներդաշնակությունը, յուրատեսակ այն շըրշանառությունը, որը կա նրա և աշխարհի միջև. բանատեղը ստացել է, այժմ վերադարձնում է:

Սայաթթ-Նովան էլ նորից հաստատում է իր հագեցված լինելը հոգևոր դանձերով: Բանաստեղծն այնքան է լցված, որ ժես քարերը, թեկուղի ալմաստ դառնային, չին հարուցի նրա նախանձը, նա այնքան ունի, այնքան է անշափելի նրա ունեցածը, որ հեռավոր կերպով անգամ կարիք չի զգում ուրիշից վերցնելու: Սայաթթ-Նովան շարունակում է անհունորեն հարուստ լինել: Բայց երեսում է, որ նա ավես երջանկություն չի զգում, որ նա կորցրել է իր հոգեկան հավասարակշռությունը, ներդաշնակությունը:

Հենց մեջ բերած տողերում Սայաթթ-Նովան ասում է, որ բեռնված «էշխի» կրակով իրեն մոտենալ անհնարին է, իսկ նախորդ տողերից մեկում ուղղակի նախազգուշացնում ֆ, աստծու սիրուն խնդրում, որ շմուտենան իրեն, որովհետեւ մոտեցողին իր բեռը կվառի: Այս տողերից էլ առաջ Սայաթթ-Նովան միենույն խաղում ասել է.

Օչով ունիզըն չի հասկանա՝ ուրիշ քահար

է բիորս.

Աչկ ունեցող շրաեսնողին ահ ու զահար

է բիորս...

Հիմա պարզ է, թե ինչո՞ւ Սայաթթ-Նովան խորհուրդ չի տալիս մոտենալ իրեն. նրա բեռն ուրիշ «ուանդ», գույն ունի, ուրիշ «թա՞րար» է, ուրիշ տեսակի: «Ուրիշ թա՞րար»... Սա հիշեցնում է բանաստեղծի հայտնի խոսքը,

որ իր ջուրը «ուրիշ ջրեն է», իր գիրը՝ «ուրիշ գրեն»։ Աւ
ինչպես այնտեղ նա ասում էր, որ ամեն մարդ չի կանա
խմել իր ջրից, չի կանա կարդալ իր գիրը, այդպես էլ
հիմա նա ասում է, որ մարդիկ չին կանա մոտենալ իր
բեռին։ Առաջին գետքում Սայաթ-Նովան, գիտակցելով
իր արվեստի և իր՝ արվեստագետի մեծությունը, գժայլում
է թաղավորի հետ, արհամարհում շար, վատ մարդկանց։
Նույնը կատարվում է նաև հիմա։ Բանաստեղծը գիտակ-
ցում է, որ իր ռանզը մարդիկ շեն հասկանում, որ Փիգի-
կապես աշք ունեցողները հոգու աշք չունեն, որ տեսնեն
իրեն։ Այնքան մոտ լինելով մարդկանց նա ստիպված է
հեռանալ մարդկանցից, օտարանալ նրանց, զգուշացնել
իրենից։ Նա այնքան է անհասկանալի դառնում, որ իր
անսահմանորեն գոված ու քաղցր բեռը հոգով կույր
մարդկանց թվում է զահար՝ լեղի։

Ի՞նչ անել, ո՞ւր գնալ։ Խաղի վերջին երկու, մեղ ար-
դեն հայտնի տողը պատասխանում է այդ հարցին։

Սայաթ-Նովուն շը հավատաք, շուն իսկըն
էս մեկըն ա,

Զըլի քե արեւոն դընիք, կու հալվե՝
ձյուն է բիորս...

Սուս է ամեն ինչ, հանկարծակի ու զայրացած ա-
սում է Սայաթ-Նովան, ծայրահեղ ոգեսորությունից թեք-
վելով ծայրահեղ հուսահատության կողմը։ ոշինչ շկա-
խմ մեջ՝ ո՛չ էշիս, ո՛չ կրակ, ո՛չ դանձ։ Զհավատաք իմ
ասածներին, իմ սրտի քուրան վաղուց մարել է։ Միակ
իսկը, միակ ճշմարտությունը այն է, որ բեռս արեի

գեմ դնելուց կհալվի, կանէանա, որովհետեւ այն ավելի չէ, քան սովորական ձյունը:

Ներքին անբավարարվածության ու գժգոհության խոսքեր են սրանք: Կարծես բարկության պահին բանաստեղծը պատուամ է իր դավթարը և արորում ոտքերի տակ:

Սալաթ-Նովան ստիլված է թարցնել իր մեծ բովանդակությունը, կորցնել նրա հետքերը: «Եշխարըս՝ մե փանջարա է...» բանաստեղծության մեջ նա արդեն հրաժարվել էր իր խաղերից. «Խաղերումն բեղարիլ իմ»: Բայց դա ընդհանուր հոգնածության սոսկ մասնակի արտահայտություն էր: Այժմ այդ հրաժարումը համատարած, ընդհանուր բնույթ է կրում: Ու այն ստեղծագործությունը, որ մի ժամանակ բնութագրվում էր որպես անխորաակ քարափ, ժայռ, այժմ հավասարեցվում է փխրուն զանդվածի՝ ձյան:

Բանաստեղծի ողբերգությունը նորից և ուժեղ բացահայտվեց: Անհօնորեն մեծ էր նրա հումանիտական դիտակցության և տիրող վայրագ, մարդու արժանապատվությունն ամեն բոլե արորող հասարակարգի միջև եղած հակասությունը: Դրա հետեանքով է, որ կեցության խանդավառ ընդունումը ավարտվեց ցասկոտ հրաժարումով ամենից, ընդհուպ իրենից: Բայց այդ հրաժարումը, աղնիվ այդ վրդովմունքը ըստ էության մի ապտակ էր իշխողներին, մարտահրավեր տիրողներին, իր մեծության դիտակցում ու հաստատում:

IV

ՌԱՄԵԿԻ ՑԱՍՈՒՄԸ ԵՎ ԸՄԹՈՍՏԱՅՈՒՄ

1

Հասարակության հետ ոմնեցած կոնֆլիկտից առաջացած ողբերգությունը իր մեջ է առնում բանաստեղծի սիրո ողբերգությունը։ Բայց, ինչպես ամենաաղետավոր պայմաններում անդամ, Սայաթ-Նովայի հոգում շարունակում է հածել սիրածի լուսալիր պատկերը և բանաստեղծը մնում է անդավաճան, այնպես էլ անդավաճան է մնում նա՝ դաժանորեն տրորվելով հոռի կարգերից — և լավի ու բարու հավատը մնում է աներեր։

Իր խորիմաստ թախիծով կլասիկ է «Աշխարհս մե փանջարա է...» խաղը։ Բայց նրա մթամած երկնակածարի վրա անդամ փայլատակում է լույսի շողը։

Գուզիմ քրոջի բըլբուլի պես...

Այս մի քանի բառը միանդամից մեղմացնում են ամբողջ խաղի մոռայլությունը։ Սա կապարե ճնշման տակ գտնվող ազնիվ հոգու պոռթկում է՝ սփոփովելու, ազատ շունչ քաշելու։ Դեռ թումանյանն է այս խոսրի կապակցությամբ ասել, թե Սայաթ-Նովան «...տանջվելով ու վշտանալով հանդերձ և տանջանքից ու վշտից

բեղարելով հանդերձ՝ միշտ էլ մնում է նույն բարին,
քնքույցն ու ազնիլը»:

Այսպիսով, բոլոր գեղքերում էլ Սայաթ-Նովայի
Հոգու խորքում շարունակում է առկայժել մի վառ ճրագու-
յանքում, այո՛, տիրողը սուտն է, բայց բանաստեղծը
շարունակում է անհողղող հավատալ հշմարտությանը-

Կըրակ էլ տաս նըշմարիտին մահ չը կա,

— ասում է նա: Ճշմարիտը նոյն է, որ ջրհեղեղից ան-
փամ ահ շունի (38 ա):

Աշխարհում արդարություն, աղալար չկա, դա-
տաստան չկա, — պնդում է Սայաթ-Նովան, — բայց ոչ
միայն չի ենթարկվում, այլ, ընդհակառակն, հակադր-
վում է այդ անիրավությանը և միենույն տեղում (33 օ)՝
ասում, որ նման պարագայում անդամ աշուղի լեզուն
բլրով է, նա չի անիծում, նա միայն օրհնում է: Սայաթ-
Նովան մնում է լավատես, մարդկացին:

Բանաստեղծն իշխից հիվանդացել է, հարայ կան-
չելու հնարավորություն շունի, լողման հեքիմն էլ կեն-
դանի չէ, որ նրա ցավին դարման անի, նա շփոթվել է,
նրա գրիշն այլես չի գրում, նա մահամերձի պես է, բայց
և այնպես՝

Միոնելու համա շիմ հովում,
ցիոնի համա իմ լալի (36 հ)...

Ինչպես էլ ըմբռնենք ցիոն բառը, ազգ թե սերունդ,
այս տողում նորից օրհնանք է լսվում: Մահը չի կծկում
Սայաթ-Նովային, նա շարունակում է լինել լայնասիրու-
թ մեծահոգի, հանրության շահը շարունակում է գերա-
կշռել:

«Փանջարայում» Սայաթ-Նովան տսել է. «Լաղերում
մենք բեղարիկ իմ»: Բայց դրանից մի տարի առաջ (1758)՝
դրած խաղում (47 ա), կարծես հակադրվելով, նա տսել է.

Միուածին օղորմի տալով սաղիրիս
իմ ման գալի...
Անցած օրըն շիմ ափսուսում, վաղիրիս
իմ ման գալի...

Թո՛ղ մեռելները թաղեն մեռելներին: Մտահոգ-
վե՛նք կենդանի մարդկանց ճակատագրով, մտածենք
նրանց լաղվա մասին, աղապայի մասին: Բլբովի պես
թուշելու մաղթանքը կարծես մարմնավորվում է այս
թոփչքի մեջ դեպի գալիքը, այս որոնումների մեջ գտնե-
լու կենդանի, իսկական մարդուն:

Մարդի համա ախ իմ քաշում,
համարդից իմ քեզարի,

— ասում է Սայաթ-Նովան իր մի այլ, հոռի տրա-
մագրությամբ «Փանջարայից» ոչ պակաս համակված
«Բեղարիկ է հոքիս մարմնից...» հայտնի խաղում:

Սայաթ-Նովան նորից ելնում է մեր առջև իր ամ-
բողջ վեճությամբ և նորից ու նորից հաստատում, որ ինչ
էլ ուզում է լինի, ինչ էլ բարկության պահին ասի աշ-
խարհի մասին, իր մասին, իր սերը նորից կյանքն է,
նորից մարդը:

Ողբերգությունը մնում է, բայց մարդկայնությունը
չի կորչում, այլ, ընդհակառակն, առավել շեշտվում է:
Աղջումն ուժեղանում է, դիմագրությունը՝ առավել: Սա-
սունցի Դավթի պես մահացու հարված ստանալով,
Սայաթ-Նովան մշուշից նորից լույս աշխարհ է ելնում,

պատրաստ նոր հարված ընդունելու։ Նրա հոգին պիրկ էր, դամասկյան պողպատի պես նա կարող էր անսահմանորեն կրանալ, բայց երբեք չկոտրվել։ Նրա հրաժարումն իրենից լի է ազնիվ ցասումով։ Նրա հոգնածության երգերում հոսեանությունը սահմանագծված է բողոքի հետ։ «Դուն էն գլխեն իմաստուն իս...» իմաստուն խաղում կշտամբումը թագավորին համարձակ էր և անվախ։ Նա ոչ միայն գանգատվում է, ոչ միայն բողոքում, այլև դիմագրավում շար ուժերին ու սայաթնովական է, որ այդ դիմագրավումը խաղ առ խաղ անեց, տարի առ տարի սաստկացավ։

2

Սայաթ-Նովայի անձնավորության և ստեղծագործության համար բնորոշ է, որ նրա առաջին խաղերից մեկը՝ «Աստղալուսով...»-ը (18 վ), գրված 1751 թվականին, ուղղված է Հենց ազնվականության զեմ, որի միներկայացուցիչը, հպարտանալով իր ծագումով, վիրավորել էր բանաստեղծին։

Աչա այդ խաղը.

Աստղալուսով ծովըն ինչպես կու ցամֆի.
Մաղով Քրոփ ջուրըն ինչպես կու շափփի.
Ուրբան զուզե բամին փրչէ մինձ ուժով,
Ժեռ բարեմեն յի՞փ կանա մե բան տանի։

Գուզե մորք ձրկնեմեն ձեն չիս լրսի,
Իշի վուտքին էն ո՞վ խինա կու քըսի.
Բամբակին էլ ավազը վունց կու հասնի,
Թեզուզ լրցնիս մեշը դուրնի յորդանի։

Պղնձէ քասրն վուրբան ուզես կըլեկի,
Քըսանն էլի շուժէ էրծարի մեկին,
Լալ շուշին էլ շին տա հին ալմասի գին,
Թեզուզ շուշին ժաշիս օսկե մատանի:

Մարք կա, իսկը վունց սատանի մէ մըշակ,
Չար սատանի տունը դառնա բըրիշակ.
Կարկամը վունց կովի Շիրազի շուշա,
Ինչժան բարցը բարեխումըն տիդ անեն:

Դուն շասիս թէ էս խիդն սազա՞նդարն ո՞վ ա.
Խոսկիս տերն իմ, հունարս էլ զրով ա.
Արո՞ւրինն իմ, ինձ կոսին Սայաթ-Նովա.
Հենց բան կոսիմ, վուր ամբերում ծեն հանի:

Արտաքին աշխարհից ելնելով, նրա դանազան
Երևույթները հակադրելով իրար ըստ արժեքի և ուժի—
աստղալուսի թուլությունը և ծովի ջրերի անսահմանու-
թյունը, մաղի փոքրությունը և Քորի անեզը մեծությունը
և այլն — Սայաթ-Նովան իր սուր ասացվածքների տա-
րափով բառիս բուն իմաստով կարկտահար է անում
հակառակորդին:

Գուքեկ շատ վեր համարիր, բայց դպումին թարեքի
վերեւում տեղ տալով՝ նա Շիրազի շուշա չի դառնա: Որ-
քան կամենում ես հարուստ հազնիիր, բայց գու կլինես
կլայեկած պղինձ և ոչ թե արծաթ: Մի՛ զարմացնի մեկ
մատանիներով, զարդարիր ապակին ոսկով՝ նա ալ-
մաստ չի դառնա: Ենթադրենք էշի ոտքին հինա քսեցինք,
դրանով նա մարդ զարձա՞վ:

Իմացի՛ր, որ մարդը, ալմաստը, արծաթը ես եմ:
Քո ասածով եմ ես խեղճ սազանդար: Բայց խեղճը ես

շեմ, այլ դու ես, քո հոգով, քո մարդկությամբ։ Դու ծայրեիծայր սուս ես, ես՝ խսկություն, ու իմ խոսքն այնքան է ուժեղ, այնքան ճշմարիտ, որ մարդկանց հոգու խորքը մտնելով, միաժամանակ վեր է բարձրանում, հասնում աստղերին։

«Աստղալուսով...»-ի ասացվածքներին հարակցող արտահայտություններն առատորեն սփռված են Սայաթ-Նովայի խաղերում։ Ամեն անգամ, երբ դիսլում են զգացուն բանաստեղծի ինքնասիրությանը, նրանք, այդ ասացվածքները, երեան են գալիս յուրաքանչյուր անգամ նոր ձևով ու տեսքով։ Պալատում ինչ-որ խոսք է առաջացել Սայաթ-Նովայի այնտեղ մնալու մասին ու բանաստեղծն ասում է.

Կավե ջամբն վունց կուլի մե քանգ չինի,
Ամեն ծառ Էլ կըլեպ չի տա դարչինի (23 կ)...

Մի դեսքի կտողակցությամբ Սայաթ-Նովան արդարության է հորդորում թագավորին և ասում։

Ակուավը բլբու չի դառնա, բանի գուզե,
վուր աշխ անե (54 հ)...

Իր վերջին խաղի մեջ (32 վ), գրված 60-ական թը-վականների սկզբին, Հաղպատում, Սայաթ-Նովան, Հիշելով աշխարհիկ կյանքն ու բարձր դասելով այն, թախիծով ասում է.

Բըրինձ էի, զարի դառնալըն ինչի՞ս էր,
Յիս աղավնի, նուր լոր դառնալն ինչի՞ս էր.
Ա՛սեմ, կըրունավոր դառնալն ինչի՞ս էր...

Այս ասացվածքներով Սայաթ-Նովան այնպիսի չշարպետությամբ է արտահայտում իր վերաբերմունքը դեպի երևոյթները և իր մաքերը, ինչպես սաղով կամ քյամանշով՝ իր զգացմունքները: Կարող է պատահել, որ զրանք ժողովրդական ծագում ունեն¹⁷: Միտեղ, օրինակ, ինքը՝ բանաստեղծը, նման ասացվածք բերելով, զրում է. «Էս առած է, յիս ինձնից չիմ հնարի» (23 վ): Բայց անկախ այն բանից ժողովրդական են, թե բանաստեղծը ինքն է հորինել, զրանք, համենայն գեպս, ցույց են տալիս, թե որպիսի նրբությամբ նա գիտեր բնությունը, ինչպես էր կարողանում համակցել իրար հետ տարրեր երևոյթներն ու փոխազդել նրանց արտաքին աշխարհից ներքին, բարոյական աշխարհը, հաստատել ոչ միայն բնության օրենքների, այլև բարոյական օրենքների անխախտելի լինելը:

Արժեքների ոլորտը թեակոխող այս ասացվածքները վերջ ի վերջո լուլորդում են ֆիոդալական իրավակարգի մի հիմնական հարցի շուրջը. որքա՞ն ճշմարիտ է, որքա՞ն արդարացի է զնահատել մարդկանց ըստ նրանց արտաքին ավյալների, ըստ նրանց ծագումի և ոչ թե ըստ ներքին տվյալների, ըստ բովանդակության:

Ուշն ու միտքը կենտրոնացնելով մարդու ճակատագրի վրա, Սայաթ-Նովան շարունակում է դիտել աշխարհը, նրան իմաստավորող առարկաներն ու էակները, գասավորում նրանց ու տեսակավորում՝ բանալի գտնելու, լուծելու համար իրեն զբաղեցնող խնդիրները: Աշխարհը նաև շարժման մեջ է զնում ոչ միայն իր զողալի հմայքը պատկերելու, այլև իր միտքը պարզելու համար: «Ինձ ավատա...» խաղը (29 վ) նա ավարտում է հետելքածքառողով.

Մարք կա կոսէ՝ ազնիվ ցիդի զարմն իմ յիս.

Ուտենին էլ կոսէ, մարխի ծառն իմ յիս.

Վլրաց բաքավուրի սազանդարն իմ յիս,

Ինձ Սայաթ-Նովա-Արուրինն ա, կոսին...

Մի՛ ողարծենար այն բանով, որ ազնիվ ծագում ունես, — ասում է Սայաթ-Նովան: Ուտենին էլ ասում է, թե ինքը մարխի ծառ է, բայց ի՞նչ է դրանով ավելանում նրան, քանի որ մարխի ծառի ազնիվ հատկությունը նա շարունակում է շունենալ: Զորին էլ ասում է՝ իմ դեղին ձին է (49 հ), բայց դրանով նա ձի շդարձալ: Մարդու արժեքը որոշողը ծագումը չէ, առհասարակ որևէ մի արտաքին, իրենից դուրս գտնվող հանդամանքը չէ, այլ նրա մեջ եղածը, նրա գործը, նրա արածը: Աշխարհումս ամեն ինչ «կամ գունքովըն կու ճանշնան, կամ՝ փոթուվով» (29 վ), այսինքն՝ առարկաներն ու էակներն իմացվում են այն բանով, թե ինչպես են արտահայտվում, ինչպես են դրսկորվում: Դրանից ելնելով է, որ բանաստեղծը, հակադրվելով ազնվական ծագումով պարծեցողին, ասում է, թե ես Սայաթ-Նովան եմ, Արութինն եմ, այսինքն՝ ինձ ճանաշում և արժեքավորում են ոչ թե իմ ծագումով, այլ ինձնով, իմ երգ ու նվագով, իմ սազու քյամանշով — ու դա է, որ լցնում է նրան ներքին հպարտությամբ, դա է, որ գարձնում է նրան անխոցելի:

Այդպիսով, ֆեռդալական կարգերի սոցիալական հիերարխիային, հիմնված ծագման վրա, բանաստեղծը հակադրում է իր հիերարխիան, որը հիմնված է մարդու շնորհքի, սեփական արժանապատվության վրա: Արժեքեները տեղաշարժվում են, առաջ են գալիս նոր գնահատականներ, նոր վերաբերմունք երևույթների նկատ-

մամբ: Մարդը սկսում է գիտվել որպես անհատականություն:

3

Սայաթ-Նովան ասում էր, որ ինքը վրաց թագավորի և աղանդարն է: Արքունիքում նա բարձր էր գնահատվում: Բնական է, որ պալատից հեռացնելը նրան վիշտ պատճառեց: Ի՞նչ եղավ քեզ, ասում է բանաստեղծը խորտակված հոգով, ի՞նչ արին քեզ հետ, չէ՞ որ դու պատվական էիր ու դովված, չէ՞ որ քեզ ոսկի արկղում՝ չին պահում.

Թաքալուրաց կամքով մեջլիս կանչվողիս,
Թավադներուց միծրվող ու հարգվողիս,
Կարմիր կապան արք ու փառքով համնողիս
Արիղայի սիր բուրձը բաժին էլավ (32 լ)...

Հանկարծակիի եկած բանաստեղծն իր այլեալլ խաղերում հորդորում է թագավորին, որ իրեն դուրս չանի, արյունը թասերով չվիթի, այլ պահի-պահպանի ատլասով ու խասով, որովհետև «թանգ առած իմ քու ահազին ծախսերով» (31 լ), որովհետև Սայաթ-Նովայի պես «ղուլ դուն կինքումըտ շիս ճարի» (23 լ):

Սակայն, աղերսանքով էլ զիմելով թագավորին, առելով, որ թեկուզ «զանըս փետով վեր հատին», ես ինձ քեզնից բաժանողը չեմ, հայտաբարելով, որ զրա համար նա պատրաստ է Քուռն ընկնել, իսկ Քուռմ շնեղգվելու դիպում ծովում խորտակվել, Սայաթ-Նովան, այնուամենայնիվ, չի գալաճանում իրեն ու նման զեղումներին, որ կրում են գերազանցորեն ընկերական-բարեկամական բնույթ, որոշ կետի հասնելով, վերջ է տալիս:

Պալատում ամբաստանվելուց հետո մեկն ասաց Սայաթ-Նովային.

...գընա, մաշված շուր իս դուն,
այսուս՝

...մե հոտած ջրբնուր իս դուն,
երրորդը՝

...մե անպատիվ հուր իս դուն,
իսկ երր բանաստեղծը զուդված-զարդարված, առազը
քոքած» գնաց թագավորի մոտ, նրան ետ տվին, ասե-
լով՝

...Գընա, էրեսը սիվ մուր իս դուն:

Նման արշամարշական, ոչնչացնող վերաբերմունքի
բացատրությունը Սայաթ-Նովան տալիս է հենց նույն
«Արթար դատէ, չէ՞ վուր թաքավուր իս դուն...» Հանդի-
մանական խաղում։ Նա ասում է.

Յիս ռամիկ իմ, ինձի վուխչ-վուխչ բաղեցին...

Ամբողջ Հարցը, ուրեմն, ռամկության մեջ էր, ա-
ռեղծվածն այդ էր։ «Բամիկ», «ստոր», ճնշված դասին
պատկանելու պատճառով էր, որ այդպիս անպատկառ
վարվեցին բանաստեղծի հետ, բառիս բուն իմաստով
վոնդեցին նրան արքունիքից ոչ միայն բացատրություն
շտալով, այլև ծաղը ու ծանակի առարկա դարձնելով։

Այս վիճակում և Հոգեվիճակումն էր Սայաթ-Նո-
վան, որ վերջ տվեց իր զեղումներին թագավորի հաս-
ցեին ու նրա վրդովված բերնից դուրս թռավ Հոչակա-
վոր «Զեռը վի կալ...» (31 վ) խաղը, ուր նա ոչ միայն
վերստին վերականգնեց իր արժանապատվությունը,
այլև ռամկի ինքնասիրությունը ելակետ դարձնելով,
շանթ ու կայծակ նետեց ամբողջ վերնախավի վրա՝
վերջին պալատականից սկսած մինչև թագավորը։

Իղուր չեր Սայաթ-Նովան այնքան համառ խորհում
աշխարհի վրա, ջոկում լավն ու վատը, վշտացած տես-
նում, թե ինչպես լավը վատաբանվում է, չոլում թրջված
հաղի պես մարդը իր տանը փոտում էր Խոստոմ-Զալին,
ինչպես շատերը, զղեստավորված ատլասով ու ոսկով,
ըստ Քության ոչինչ չեին ներկայացնում իրենցից, բայց
իշխում էին և հրամայում:

Մարդկային փոխարարերություններն էին, որ
գրգեցին բանաստեղծին՝ զննել արտաքին աշխարհը,
զատել արժեքավորը անարժեքից, ապա ամբողջ այս
փորձը նորից տեղափոխել մարդկանց վրա և խստօրեն
դատել նրանց: Անվախ դիմելով թագավորին, Սայաթ-
Նովան ասում է.

Չեոր վի կալ, վաղ մարրութին չիմ ուզում.

Էս աշխարում փարքամուրին չիմ ուզում.

Վաղ բան ասիլ, յա վաղութին չիմ ուզում.

Յիս մարդ մարը իմ՝ նամարդութին չիմ ուզում...

Յիս ուսմիկ իմ՝ բավարութին չիմ ուզում...

«Յիս ուսմիկ իմ՝ թալապութին չիմ ուզում» Հոչա-
կավոր խոսքի մեջ է Սայաթ-Նովայի սոցիալական փիլի-
սոփայությունը: Վերջին այս տողին նախորդող տողե-
րում ուսմիկն նա վերագրում է ամենաբարձր, մարդ
մարը լինելու հատկությունը, իսկ թալապին բաժին
տալիս սոսկ նամարդութինը իր բոլոր պարագաներով
հանդերձ՝ վատ խոսքից մինչև ընշաքաղցությունը: Դրա
համար է հենց, որ հասարակ այս մարդը վճռականորեն
սահմանադատում է իրեն վերնախամից և արհամար-
հանդով նայում նրան՝ արդեն ոչ թե ցածից վերից՝ ցած: Հիմա ար-

դեն Սայաթ-Նովան չի գիմում անդամ իրեն բաժին հասած շնորհքին՝ հաստատելու համար իր առավելությունը, այլ հենվում է սոսկ ռամիկի տղնվության և վեհության վրա՝ իր պայծառ զրոշի տակ առնելով բոլոր հասարակ մարդկանց, ամբողջ խալխը:

Այս խոսքից հետո, որ տառապած մարդու աղնիվ մի ճիշ է, մի բողոք ընդդեմ անարդար կարգերի, Սայաթ-Նովան իր հաշիվն իւ տեսնում նաև թափավորի հետ ձիշտ է, թափավորի նկատմամբ դեռ որոշ պատրանքներ մնում են նրա մոտ, նա դեռ շարունակում է ասել՝ որ ինքը նրա ոտի տակի հողն է, որ

Բաղրս բաղիտ կից ու միատիդ ըլի՝

Արանքըն պատ՝ բաժանուրին չիմ ուզում.

Սակայն քննադատական ոգին արդեն բույն էր գրել Սայաթ-Նովայի հոգում, այլ երգերում նա արդեն կասկածանքի տակ էր առել թափավորի արդարամտությունը («արթար դատե, չէ՞ վուր թափավոր իս դուն», «Հալբաթ դարդ ու ցավի մի ախալուր իս դուն»), իսկ հիմա, հակադրվելով մեջքերած երկտողին, իր խաղը նա վերցացնում է հետեւյալ երկտողով.

Ե՛կ, մի՛ զբնա զըլովստ կախ, Սա՛յար-Նովա,

Աղ ու հացիտ ախալերուրին չիմ ուզում...

Ինչպես առաջին տան մեջ նա ասում է բավարութին չիմ ուզում, այնպես էլ վերջին տան մեջ, ընդայնիլով իր միտքն ու վերաբերմունքը, նա ասում է ախալերուրին չիմ ուզում՝ արդեն թափավորի հետ, գրանով հավասարեցնելով թափավորին թափադին, որպես առա-

շին, ամենամեծ թավադ: Այդպիսով, Սայաթ-Նովան սահմանադատվում է ամբողջ վերնախավից, արհամարհանքով երես դարձնում նրանից ու մի փոքր վարանումից հետո խրախոսում իրեն շնորհելու, զլուկը բարձր պահելու, հպարտ լինելու իր հասարակ ծագումով, իր աստվածային շնորհքով:

«Արթար դատե...» և «Զեռը վի կալ...» խաղերը Սայաթ-Նովան զբել է ու իր հարաբերությունները խզել թագավորի հետ հավանորեն 1758—1759 թվականներին: Այդ տարիներին են գրված նաև «Ամեն սաղի մեջն զոված...», «Արի համով զուզուղ արա...», «Աշխարս» մե փանչարա է...» և մի շարք այլ նույնատիպ խաղեր: Այսպիսով, 50-ական թվականների վերջը Սայաթ-Նովայի իրականությունից դժոնելու և դրա հետ սերտ կապված ու մատամբ զրանով պայմանավորված ինքնաճանաշման, ինքնազիտակցման շրջան է, ներքին, վաւզոց սկսված համառ պայքարի, հակասությունների սուրբացահայտման, աշխարհի հետ ունեցած կոնֆլիկտի խորացման տարիներ:

* * *

Սայաթ-Նովայի ըմբոստացումը թագավորի դեմ պատահական երկույթ չէ: Եթի մի ընդհանուր հայացք ձգենք Սայաթ-Նովայի ամբաղջ ստեղծագործության վրա, դժվար չի լինի դիտել, որ նա,— լսելովն, թե ի լուր ամենքի, — առհասարակ հակազրվում է իր գարաշըցանին, դիմագրավում նրան: Թագավորի դեմ տպըստամբվելը ֆեոդալական կարգերի հակազրման սոսկ բարձրակետն է հանդիսանում:

Սայաթ-Նովայի էսթետիկան հասարակ մարդու գեղեցկության ըմբռնումն է և իր սուր ծայրով ուղղված է շար, բութ մարդկանց գեմ, կյանքում իշխողների գեմ: Մարմնի պայքարը հողու գեմ ու նրա հաղթանակը բանաստեղծի հաղթանակն էր ընդունված մտայնության գեմ, պաշտոնական, կրոնից դարերով սրբագործված բարոյախոսության գեմ, որը վաղուց արդեն խարիսխում էր և որին իր խաղով ու կյանքով ուժեղ հարված հասցրեց Սայաթ-Նովան: Անգամ նրա ներբողը լիզվին, գա ծշմարտության վերջնական հաստատման խորագույն հավատն էր սուր համատարած տիրապետության մըթ-նուրոտում:

Սայաթ-Նովան ուներ սիրածի մի կերպար, որից երկրի բույրն էր մխում ու եթե երկինքը մասնակցել էր նրա գեղեցկությանը, ապա սոսկ որպես զարդ, որպես աստղերի և ոչ թե Հրեշտակների բնակալվայր: Նա շտեռնըված ուժով երգեց սերը, որով և հասցրեց մարդուն հասանելի բարձունքների այն ժամանակ, երբ մարդը, հասարակ մարդը ճորտ էր կամ կիսաճորտ, երբ նա դաժանորեն կեղեքվում էր, անպատիժ տրորվում, հողին հավասարեցվում, մորթվում: Նա խոր ըմբռնեց սիրո կապը տառապանքի հետ իր ապրած աշխարհում, բայց ոչ միայն շվեց իր նվիրական զգացմունքը, այլև տուփել պարզեց նրա գրոշը: Սայաթ-Նովան հիմասթափության ժամեր ունեցավ, նրան ընկճեցին, կորացրին, բայց ընդուստ մի շարժումով նա նորից ուղղվեց, նա բանտարկյալ զգաց իրեն, բայց լույսի ճառագայթը նրեք չվերացավ նրա հոգում:

Սայաթ-Նովան ամբողջական էր, ատում էր ամեն մի կաշկանդում, նրա մեծ, աշխարհի շափ լայն հոգին ապատ էր շարից, ամեն տեսակ խծբանքից ու մանրու-

քից: Բանաստեղծն ուներ ներքին գեղեցկագույն աշ-
խարհ, նա զիտակցում էր իր հանձարը, իր հոգեկան
անհույս հարստությունը, իր շռավորեն օժտված լինելը,
որով և սոցիալական սանդուղքների վրա ցածր տեղ
դրավող այդ մարդը, անվախ ծառացավ ֆեոդալական
աշխարհի դեմ:

Նա ընդվզեց տիրողների դեմ իր ամբողջ էությամբ,
իր երգով, իր զիտակցված վերաբերմունքով, իր արքա-
մարհանքով հանդեպ այդ տիրողների ներկայացուցիշ-
ները՝ փոքրից սկսած մինչև ամենամեծը: Բանաստեղծը
բարձր պահեց ուամիկի պատիվը, հոգու ամենանուրբ
թելերով սիրեց այդ ուամիկին, իր մեծ շնորհքը, հարուստ
հոգին, սիրող սիրոտը ի սպաս զրեց նրա երշանկությա-
նը և շունչը փշեց թշնամու սուրբ սրտում, իր բարոյա-
կան-հասարակական պարտականության խոսքը բերա-
նին: Սայաթ-Նովան ոչ միայն սիրահար աշուղ էր, այլև
անձնուրաց ասպետ:

Նա բանաստեղծ էր շնորհոքն աստծո, արտիստ էր,
վարպետ բարիս բուն իմաստով, նրա երգը կախարդում
էր մարդկանց, նրա հմայքից սրբնթաց զուրն անգամ
կարող էր կանգ առնել:

Իր բարձր վարպետությամբ է, իր խոր հուզով է,
իր ընդդրկուն հարցադրումներով է, որ Սայաթ-Նովայի
սուրյեկտիվ լիրիկան դարձել է ժողովրդի սեփականու-
թյուն, ունեցել հասարակական մեծ արձագանք թե՛ իր
ժամանակ և թե՛ այսօր, երբ նրա երգը առանձին ուժով
և հմայքով է զրնդում մեր ականջում:

Սայաթ-Նովան երգում է իր սերը, իր ցավը, բաց
նրա բերիքանքն ու տառապանքն այնքան են մարդկա-
յին, նրա աշխարհասիրությունն այնքան շեշտված, որ
նրա խոսքը դարձել է երգ բոլորի համար: Նրա խոր ապ-

բումներն ու փայլուն մտքերն ամփոփված չեն մնացել նրա մեջ, այլ գորս ժայթքելով ծավալվել են աշխարհով մեկ։ Այդ նշանակում է, որ նա հավաքել է այն, ինչ ցրված է եղել, զիտակցել է այն, ինչ դրվանի տակ է եղել, հանձարեղ ձեակերպում տվել նրան, ինչ շատերի բերանում եղել է անկատար։ Սրանով էլ նա դարձել է մարդկանց ուրախության և միաժամանակ ցալի անզուգական երգիչ, խալխի սիրելին։

Սայաթ-Նովան անհատականություն էր բառիս իսկական առումով, նա զիտակցում էր իր արժանապատվությունը, իր անհուն մարդասիրությունը, իր տեղը ապագայում։ Նա ուներ բարդ ու տարրերակլված հոգերանություն, իր հակասությունների մեջ նա միանական էր, լիասիրտ ընդունում էր աշխարհը, և կինը նրա համար սկաշտամունքի տուարկա էր, սերը՝ խոր երազանք։ Նա առում էր անհրապուցր իրականությունը ու ոգորում շարի դեմ, հասարակ մարդու ըմբռնումների թարգման էր նա և հոգու աղատության երգիչ։ Նա քնարերդու էր, իր ստեղծագործական զիտակցության բովով նա անցկացրեց մարդուն իր ամրողությամբ ու ստեղծեց արվեստի շքնաղ մի աշխարհ, որ շողջողում էր իր խաղերի լալ ու գոհարի կախարդական գույներով։ Նա ուայցառ մի կետ էր ֆեոդալական մութ աշխարհում, նոր մարդու ու նոր կյանքի հաղթանակի կանխազգացում, գալիքի առհավատշչա։ Նրա մասին է ասել Զարենցը.

Կիոխվին տարիքը, կիոխվի մարդը,
Բլրովի երգն էլի սարին կմնա...

САЯТ-НОВА

Резюме

Песни Саят-Новы, им самим собранные и записанные в особой тетради, трогают и долго еще будут трогать своей глубиной, изумительной красотой и человечностью.

Саят-Нова родился в начале XVIII века, в 1712 году. Этот век не так уж далек от нас и все-таки мы имеем сравнительно мало биографических данных об этом замечательном человеке, поэзия которого, по словам Валерия Брюсова, наполнила собою все столетие.

Невзирая на эту скудность источников, нам — как это ни странно — все же хорошо известна хронологическая канва творчества Саят-Новы, ибо поэт имел обыкновение грузинским летоисчислением «хроникон» проставить под многими из своих стихотворений не только год их написания, но даже иной раз месяц и число.

И вот, на основании этих записей можно с уверенностью сказать, что Саят-Нова сочинял песни начиная с 40-ых годов и вплоть до начала 60-ых годов, и что подлинный расцвет его творчества

падает на 50-ые годы и, в особенности, на последние годы этого десятилетия.

До нас не дошло жизнеописание Саят-Новы, да такого жизнеописания и не было, ибо кто мог обратить внимание на бедного ашуга? Считается чудом даже то, что тетрадь его уцелела и дошла до нас. Но как раз в заключенных в ней стихах можно черпать некоторые сведения о жизни Саят-Новы. В дальнейшем Георг Ахвердян, первый издатель и исследователь песен Саят-Новы (они были изданы в Москве, в 1852 году) оставил нам ряд преданий о поэте и записей о нем со слов современников. Имеются также несколько других отрывочных данных.

На основании этих данных можно с уверенностью сказать, что отец Саят-Новы, сирийский армянин Карапет, переселился в Грузию из Алеппо, а мать, Рипсиме, была тифлисской армянкой. Саят-Нова—ашугское имя поэта; при крещении его называли Арутином. В молодые годы Арутин подвизался в профессии ткача и даже внес какие-то усовершенствования в ткацком станке. Однако он рано увлекся искусством ашуга и благодаря своим поразительным способностям быстро прославился не только как автор песен и мелодий, но и как музыкант, виртуозно играющий почти на всех восточных инструментах: кяманча, чонгур, саз.

Несмотря на неустойчивость той эпохи,—частые опустошительные вторжения лезгин с севера, угрозы Персии и Турции с юга—Тифлис продолжал оставаться тем ослепительно-сказочным городом,

которым, как говорит Ованес Туманян, восхищались «вся Малая Азия и Ближний Восток». В нем, продолжает Туманян, смешались, слились все народы Востока, каждый со своим языком, религией, философией и национальным творчеством и так как жизни этого удивительного города «задавал тон беспечный и веселый грузинский нрав, потому и старый Тифлис не был состоящим из чуждых друг другу этнографических единиц конгломератом, а праздничным домом, где справляли свадьбу и куда были приглашены все национальности и племена Кавказа».

В такой атмосфере жил и творил Саят-Нова. Не удивительно, что он писал на армянском, грузинском и азербайджанском языках—писал с равной силой. Это не только знание языков своих соседей, не только знание их душевного уклада и быта. Эти народы, столь разные по своему языку и столь самобытные по своему национальному облику, в сокровенных извилинах своей духовной жизни тесно сомкнулись друг с другом. Глашатаем этого единения и подлинной, задушевной дружбы и был Саят-Нова.

Из некоторых песен Саят-Новы можно сделать тот определенный вывод, что в тех-же 50-ых годах Саят-Нова стал придворным музыкантом и певцом, сазандаром грузинского царя Ираклия второго, человека не только храброго, но также просвещенного и гуманного. Ираклий, несомненно, искренне любил Саят-Нову и был привязан к нему. Говорят, что он даже прислушивался к его советам и, во

